

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵՄՆ

## ՓՏԱԽՏԻՆ ԱՌՋԵԻ

Վատ ու լճացած անտարբերութիւններու, գործոն դատալքութիւններու և խնդումիբն դաւաճանութիւններու զէմ, «Նոր Կեանք» ի մղած պայքարը խորապէս ցնցած ըլլալ կ'երևի լիակամ, ընդարմացած հոգիները, որոնցմէ շատեր զարթնումի, սթափումի անկեղծ նշաններ ցոյց կուտան Այն համակրական որտապնդող ձայներուն մէջ, որոնք ամէն կողմէ կը հասնին մեզի հետզհետէ; կը հանդիպինք երբեմն վարանոտներու, որոնք՝ խոռոտովանելով հանդերձ պայքարին անհրաժեշտութիւնը, խոռոտովանելով հանդերձ դիզուած, բարդուած ապականութեանց անմիջական մաքրագործումին օտիպողական պէտքը՝ կը թուին չի կրնալ հաշտուիլ տակաւին այն մտրակող և անսողք ուղղութեան հետ, որ սակայն միակ գործնական միջոցն է իրենց ալ վերջապէս ընդգրկած ազնիւ նպատակին հասնելու:

— «Քիչ մը կակուղ եղիք» — կը թելադրեն մեզի, բարեացակամ ու հոգածու վրդովումով մը:

Պէ՛տք է արդեօք: Այնպիսի ատեն մը, երբ մանրակրկիտ խուզարկութիւններէ յետոյ, զրեթէ ո՛չ մէկ տեղ մաքուր մնացած տեսնելու մխիթարութիւնը կ'ունենանք, երբ, ընդհակառակը, կը տեսնենք թէ ապականութիւնն ու փտութիւնը, չափազանցութեան սահմաններուն մէջ, ահաւոր համեմատութիւններ առած են:

Պէ՛տք է արդեօք «կակուղ» ըլլալ, երբ մեր չորսդին կը վխտան թերթեր, մարդեր — անարգութեան դժներես կամաւորներ — որոնք ամէն սրբութիւն ոտնակոխ ըրած, ամէն պարկեշտութեան հրաժեշտ տուած — եթէ երբէք ճանչցած էին ո՛ր է սրբութիւն, եթէ երբէք ունեցած էին ա՛ն է պարկեշտութիւն — կը ջանան պատրաստել հասարակութիւն մը որ՝ վաղը՝ կեղծիքի, օտութեան ու վարկաբեկումներու մէջ պիտի փնտռէ ու առնէ իր հոգեկան ու մտաւոր բովանգակ սնունդը:

Պէ՛տք է արդեօք «կակուղ» ըլլալ, երբ օրը օրին, վհատեցուցիչ աճումով մը, բազմանալը, յորդիլը կը տես-

նենք ուրացումի եւ ցածութեան հոռանքներուն, որոնց զէմ, անհրաժեշտ է կուրծք տալ բուռն ու կատաղի դիմադրաւումով մը:

Պէ՛տք է արդեօք «կակուղ» ըլլալ, երբ ո՛ր կողմ ալ դաճանք, կը տեսնենք խաբէութեան արհեստաւորներ, որոնք կը նկրտին հայ ամբոխին ստոր բնազդները շոյել, անոր կոյր նախապաշարունները փոխափայել, անոր միամտութիւնը շահագործել ու անոր զոյութիւնը թու նաւորել, այլասերել:

Պէ՛տք է «կակուղ» ըլլալ, երբ ամէն տեղ, ուր հայեր կան՝ քանի մը ազնիւ ու անխաթար հոգիներու ցանցառ բացառութեան մը մէջ՝ կը գտնուի յուսահատեցնող մեծամասնութիւն մը որ իրեն զբաղում ու ժամանց ըրած է, ո՛չ միայն յեղափոխութեան զէմ օտնալ, այլ՝ ամէն գնով, ամէն բան ու ամէն մարդ սեւցնել, ցեխոտել:

Պէ՛տք է «կակուղ» ըլլալ, երբ անդին մեզ կը մորթեն, մեր արիւնը կը խմեն, ասդին կը գտնուին Հայու զաւակներ որոնք պիղծ ախորժակը կ'ունենան Յեղափոխութիւնը ծաղրելու, նոյն իսկ ինքզինքնին յեղափոխական ձեւացնելով, եթէ իրենց միջին հաշիւները այդպէս ընել պահանջեն:



Բարոյական այս տագնապիչ փտախտին՝ որ մեր ազգային ամբողջ հոգին ուտել, նեխել, լմնցնել կը սպասնայ՝ օտը ու կտրուկ զարմաններ միայն պէ՛տք են, երբ դեռ ուշ չէ բոլորովին:

Թարախոտ վէրքը տեսնել ու նշգրակը ձեռքը վարանիլ մնալ, վախնալով որ հիւանդը ցաւի ազաղակներ պիտի բարձրացնէ, ատիկա խղճամիտ ու կարող վերաբուծի գործ չէ: Ճշմարիտ վիրաբուժը գիտէ թէ հիւանդը պիտի պոռայ, գիտէ նոյն իսկ որ վէրքին թարախէն իր երեսն ալ պիտի ցատքէ, բայց տիրաբար կը կոխէ զանակը, կը ճեղքէ, կը նետէ փտութիւնը, օրպէսզի ան չի կրնայ վարակել ամբողջ կազմուածքը ու չի կրնայ մահացու դաճնալ:

Առանկ վճռական պարագաներու մէջ, մաքրագործումի ատեն — ըլլա՛յ ան հոգիի թէ մարմնի — վարանիլ,

խնայել՝ կը նշանակէ թող տալ որ չարիքը արժատանայ  
ու անբուժելի դառնայ:

Մենք՝ հիմնական ու արժատական դարձանուծի մը  
վերջին ծայր ստիպողական դարձած պէտքէն հարկադ-  
րուած՝ յանձն առինք քալել այս անողոք բայց անհրա-  
ժեշտ ուղղութեամբ, որմէն հրաժարելու համար պէտք  
է որ առողջ ու բարեբար շունչի մը բերած կազդուրուժը  
հաստատենք մեր պլշկոտ բարքերու թունաւոր մթնոլոր-  
տին մէջ:

Հիմա՝ իրերու ներկայ դժնդակ դրութեան մէջ, որ-  
քան ալ անախորժ հնչէ մեր ձայնը հիւանդներու ական-  
ջին, որքան ալ դժուարին ու տաժանելի ըլլայ այս  
ճամբան, մենք մեզի չպիտի ներէինք երբէք վարանիլ:

Յարաճուն փտախտին առջև «կակուղ» ըլլալ, հի-  
ւանդը բժնի մեղքն է կը նշանակէ պարզապէս: Այդ  
ոճիւրին կարող չենք մենք հոս:

### ԱՋԱՏ ԽՕՍՔԵՐ

### ԳԱՂԱՓԱՐԻ ԿՌԻՒԷԼ

Այլ գրեթէ անելորդ է հաստատել սա առօրեայ ու  
կուրցնող ճշմարտութիւնը, թէ ամէն անոնք որ՝ Հայ  
ազգին մէջ՝ դիտակից ու անշահախնդիր ճիգի մը կը  
նուիրօտին, հաւաքող ու խանգալառութեամբ, ամէն  
անոնք որ ազնիւ ու այլասէր իտէալի մը կը հետապնդին  
ուղղամտօրէն և անողոքաբար, ամէն անոնք վերջապէս,  
որ իրենց հանրային գործունէութեան մէջ՝ առաջնոր-  
դուած, կաշկանդուած չըլլալով անձնական շահերու գո-  
ղակար մտահոգութենէն՝ չեն ալ երբէ՛ք զգուշանար ու-  
րիշներու շահախնդիր ու ետական նկատումներն ու ոգո-  
րումները հոլանելէ, գերեւելէ, — բոլոր անկեղծները,  
խղճահարներն ու անձնուէրները—բոլոր մեղիքներն ու  
գործ առողջները—գատապարտուած են ու պէտք է  
պատրաստ ըլլան մինչեւ ծունկուրնին միաճուելու գար-  
շահոտ Տղմուտին մէջ զոր անոնց առջին պիտի բանան՝  
իրենց նեխած հոգիները միաբերան փոխելով շնական  
Ստութիւնը, թունալից ու անկարող Զրպարտութիւնն ու  
իւկայից ու յուսահատ վատութիւնը:

Աօրկա պէտք է աչքերնին առնեն, միանգամ ընդ  
միշտ, ամէն անոնք որ գաղափարի մը համար կռուիլ կը  
յաւակնին ու ամէն անոնք որ տիլէթանթիսկոն տարտամ  
կամկութիւններու զոհացումը փնտռելէ աւելի՝ որոշ բան

մը կ'ուզեն ու անոր կը ձգտին յաժառօրէն:

Պէ՛տք է մետոյլ, պէ՛տք է ցեխոտիլ...:

Այս անճողոպրելի հարկին առջև, տրտնջալը ծի-  
ծաղելի՝ ու օրտմտիլ ու տեղի տալը վատութիւն է պար-  
զապէս: Ո՞վ ըսաւ քեզի որ քու հանգարտ անկիւնէդ  
դուրս գաս, քու անհասական խաղաղութեանդ խղճա-  
միտ պահպանումէն բաժնուիս ու հանրային պայքարնե-  
րու փոթորիկին մէջ նետուիս: Ո՞վ ստիպեց քեզի որ  
ելլես շարիքի, նենգութեան ու մատնութեան ուխտուած-  
ները հալածես: Չէ՛ր գիտեր որ մաքրելու ձեռնարկե-  
լով շորսիդ գիգուած ու շարունակ կուտակուող ապա-  
կանութիւնները՝ անհանգիստ պիտի ընէիր անոր մէջ  
կծկտած, անոր մէջ սողացող ու անով սնանող էակ-  
ներ, որոնք քեակամարտ պիտի նկրտէին քեզ դի-  
մադրել, իրենց մատչելի միակ ղէնցովը—մետոտութեամբ:

Աս առանկ է, ու ասոր զէ՛մ գանգատիլ, գնանա-  
նալ, վհատիլը պզտիկ մարդու գործ է ու պզտիկ հա-  
ւատքի, պզտիկ ինքնավստահութեան ապացոյց:

Անշուշտ, շատեր՝ առաջին քայլին՝ դեռ հազիւ մօ-  
տեցած անխուսափելի Տղմուտին՝ քիթերնին կը բռնեն,  
նողկանքէ կ'ընկրկին, կը հրաժարին աւելի առաջերթալ  
ու կը քէննան, կը քաշուին, կը նահանջեն: Բայց արի  
կուուզը, անգամ մը որ պայքարին ճամբան ինկաւ, ա՛լ  
ետին չի դառնար, ու չի՛ կայ ստութիւն, չի՛ կայ զրպար-  
տութիւն, չի՛ կայ վատութիւն որ կարող ըլլայ գայն  
կեցնել:

Պէ՛տք է մետոյլ, պէ՛տք է ցեխոտիլ...:

Ու հո՛տ իոկ է որ պիտի գտնես մաքառած ըլլալու  
զոհացումը, յաղթած ըլլալու կազդուրիչ ապահովութիւնը:  
Ու ճշմարիտ հանրային գործիչը—ան որ հանելու մի-  
ջոց մը, ապրելու ասպարէզ մը, կամ հանգիստի հան-  
գրուան մը չի փնտոեր, այլ ջերմասնոց առաքելու-  
թեան մը (միամիտ՝ թերեւս, բայց ապահովաբար ան-  
հրաժեշտ) հաւատքէն կը ներշնչուի, կը մղուի, ա՛ն որ  
պաշտօն չի՛ ճանչնար, այլ պարտականութեան միայն  
կը հպատակի—ճշմարիտ հանրային գործիչը ուրիշ բան  
չուզեր, եթէ ոչ կուուիլ, կուուիլ շարունակ, կուուիլ ան-  
զազար իր գաղափարներուն, իր համոզումներուն համար:

\* \*

Բայց գաղափարի կռիւր իսկապէս գոյութիւն չունի  
այսօր—ունեցա՛մ է երբէք—մեր մէջ: Տարբեր գաղա-  
փարներ չի կան և ոչ ալ անոնց տարբեր ու ընդդիմաճարտ  
ախոյեանները հետեւաբար: Յեղափոխական Գաղափարը  
կայ միայն ու զայն տարածող, անոր համար մարտըն-  
չող յեղափոխականներ, որոնց զէ՛մ սակայն ո՛չ մէկ բա-  
նաւոր, պատճառաբանեալ ու համոզուած հակառակու  
թիւն կարելի է հաստատել, այլ պարզապէս ետամու-  
ներու, վատերու, զատալիքներու և մատնիչներու պիղծ

համերաշխութիւն մը, որ գոնէ քաջութիւնը չունի բացէ իրաց թշնամի հոչակելու ինքզինքը Յեղափոխական Քաղաքարին և որ նոյն իսկ իմաստուն ու քաղաքագիտական կը սեպէ զայն քանզի փորձելէ առաջ՝ անոր գեղեցկութիւնը երգել ու յաճախ անով զինուիլ կը յանդգնի անոր ճշմարիտ ու անձնուէր ատոյեաններուն դէմ:

Քաղաքարի կոխը գոյութիւն չունի մեր մէջ: Յեղափոխական կազմակերպութիւններէն զառ, Հայ Հաւաքական մարմին մը կայ նախ, որ զաղաքար մը ներկայացնէ, իտէալ մը դրօշակրէ ու ատոր համար պայքարի: Բայց կամ գոնէ անհատական ուրոյն ու անհատ սկզբունքներ ու գաւանանքներ: Կրնա՞ք ցուցնել մեզի՝ Հայ ժողովուրդին մէջ՝ երկու ճշմարիտ հակառակորդներ — բառին ազնիւ ու մաքուր առումովը: Չէ՛: Հայ հանրային գործիչը հակառակորդի մը ծարաւէն կը գայարուի: Այն առանձնը կը մնայ զաղաքարի կոխը:

Այո՛, կայ կոխ մը, անհրաժեշտ ու ստիպողական, որ Քաղաքարին համար մղուելով հանդերձ, չունի իր զուտ զաղաքարական հանգամանքը, — Յեղափոխական բրօքականտինն է ատիկա, որ կը ստիպուի շատ անգամ մաքառիլ ոչ թէ պաշտպանելու համար Քաղաքարը ուրիշ ու թշնամի վարդապետութեան մը ոտնձգութիւններուն ու յարձակութեան, փրկութեան տարբեր ու յանգուզն յաջուովի մը կամ հակազդեցութեան ու և զիտակից ու անկեղծ փորձի դէմ, այլ պարզապէս կարգ մը օտրկացած, պոստիկացած, անասնացած հայերու դէմ, որոնք Յեղափոխութիւնը մեռցնել կ'երազեն չկրնալով զայն ծառայեցնել իրենց գետնաքարէ փառասիրութեանը, կամ վարնոց շահախնդրութեանը ու արգելք մը տեսնելով անոր մէջ իրենց եսական անխոստովանելի նրկատուներուն յաջողութեանը:



Այսպէս բարձրուած զաղաքարական կոխը — ուրոյն ու հաւասարապէս անկեղծ համոզումներու ուղղամիտ ու տրամաբանական բաղխումը — գոյութիւն չունի մեր մէջ: Քաղաքարական կոխը տարամեծօրէն կը օսէ մանափակուի, այն առանձն, յեղափոխական բրօքականտին շուրջը: Յեղափոխական Քաղաքարին ատոյեանները կը մաքառին հեղգութեան, անտարբերութեան ու վատութեան թանձրատուութիւնը կը ներկայացնէ, անոր մէջ արթնցնելու համար ազգային ճակատագրին գիտակցութիւնը ու յեղափոխական իտէալին փրկարար հաւատքը: Այս անհրաժեշտ ու գերազանցօրէն այլասեր պայքարը կարելի չէ մղել Հայ ազգին մէջ, առանց անխուսափելիօրէն ենթարկուելու շկամութեան, առեւտրութեան ու նենգութեան մոլեգին պոռչուցումներուն:

Ու ահա՛ թէ ինչ կը պատահի:

Տեսարութիւնն ու Յաճութիւնը յանկարծ թունդ կ'ելլեն ու իրենց խելայեղ շուարումին մէջ իրարու կը փաթառուին, կը համարուին ու ա՛յ՛ ձեռք ձեռքի՛ կը մեղսակցին: Տխուր ու թունաւոր հոգիներ իրար կ'անցնին, տակնուվրայ կ'ըլլան մէկէն: Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ: Օ՛ ինքնաշարժար, ինքնազալար անձկութիւնը մթին ու մեղապարտ խղճմտանքներուն: Քու անանձնական ու ընդհանրական առաջադրութիւններով մղած պայքարը իրենց ճղճիմ ու աննշան անձերուն վրայ առեր են: Ու կը փրփրան, կը լորձնոտին: Իրենց պէս հազարաւորներ կան, բայց այդ լուսնոտ, այդ չհամակերպող չընչութիւնները կ'ուզեն որ անպատճառ իրենց համար գրած, իրենց համար միայն բօսած ըլլատ այն անողոք ու բարերար խօսքերը զորս կ'ուղղես ապականած, այլասերած ամբոխներու: Ամէն հպարտութենէ, ամէն արժանապատուութենէ զուրկ՝ անայլայլ ու արհամարհոտ այլուրութեամբ մը «վրանին չառնելու» իրենց ներքին խռովքը շմտանելու, չխոստովանելու որբալի ազաքինութիւնը, տարրական ամօթխածութիւնն ալ չունին գոնէ:

Մենք, մեր բնիկները տեսութիւններուն ու հայեացքներուն ու ստիպողական մաքրագործումի մեր սրտցաւ ու բուռն ջանքերուն մէջ, թելադրուած չենք երբէք առաւել կամ նուազ յարգելի, առաւել կամ նուազ անարգ անձնականութիւններու մտահոգութեան:

Մեր գործը ազգային — բնկերային երեւոյթներու, մտքի ու հոգիի ընդհանուր վիճակներու հետ է ու մեր բոլոր ճիգերուն մէջ՝ նուիրական Քործին գերագոյն ու շերմեանդ մտահոգութենէն կ'առաջնորդուինք միայն ու միշտ: Յեղափոխական տեսակէտէն կը դիտենք ու կը դատենք ամէն բան, որովհետեւ տիրական տեսակէտն է ան մեզի համար — ու պէտք է ըլլայ բոլոր պարտաճանաչ ու գիտակից հայերուն համար:

Այսպէս, երբ մեր վատ ու անձնամոլ ունեւորները կը հարուածենք՝ այսինչ պատմայի վաճառականը, այսինչ նաւթի հանքատէրը չէ՛ որ ունինք մեր աչքին առջև, այլ անպարտաճանաչ ու անարժան հայերու ամբողջ միատարր գասակարդ մը, կամ երբ ինքզինքը «մտաւորական» կոչող երիտասարդութիւն մը անխնայ կը ձաղկենք ու կը խարանենք, Յեղափոխական Շարժումին հանգէպ իր անտարբեր հանդիսատեսութեան ու իր ճակատագրական նախատախանիստ վերին դժնդակ գասալքութեանը համար՝ այսինչ քաղաքի իմաստակը, այսինչ խուճբէն տիրացուն չէ որ ունինք մեր աչքին առջև, այլ ամբողջ վիժած սերունդ մը անկարողներու, ռաթէներու, պզտիկ առիվխոթներու, գետնաքարէ ծառաներու, շահախնդիր ու վաւաշտ ցաւագարներու, որոնք ամէն տեղ միեւնոյն փտութեան հոգին ու միեւնոյն վարագ եռականութիւնը ցոյց կուտան:



Ասոնք են, մեր մէջ, գաղափարի պայքարը մղողին առջեւ ելլողները, ասոնք են յեղափոխական բրբաբական տին շուրջը ոտնացողները: Ու ասոնք չեն կոռախ, այլ Թատուի, վարկաբեկի միայն կը նկրտին:

Քաջութիւն, անկեղծութիւն, ուղղամտութիւն, — ասանկ բաներ փնտռել մի՛ փորձուիք անոնց քով: Պարապ տեղը յոգնած կ'ըլլաք:

Գաղափարներ, սկզբունքներ, համոզումներ, — կոկծալի իմաստակները: Հերքումի, վիճաբանումի կամ էութիւնն իսկ չեն կրնար ունենալ: Գիրքին ուրացումներով ու անիմաստ ու հակիրճ ժխտումներով կը շատանան, ու կը զգուշանան ըսածներդ, գրածներդ, փաստերդ վեր առնելէ, քրքրելէ՝ ո՛չ թէ միայն օրովհետեւ հարիւրին իննսունընդունիւն անկարող են ո՛ր է գաղափարական ճիշդի, այլ օրովհետեւ գիտեն օր, այդ ճամբուն մէջ, չեն կըրնար յաջողիլ ու գատապարտուած են ճգմունիւ, խորտակուելու ու օրովհետեւ՝ մանաւանդ, այնքան գիրքին ու մատչելի է իրենց ցեխոտել, սեցնելը: Տխմար ու անգիտակից ամբօրը վրդովող, թունաւորող, գայթակղեցնող, անօր կասկած ու մատնութիւն թելադրող քանի մը ռամիկ ու աղատ եղանակներ կան, որոնք երբէք չեն հինար, չեն փոխուիր և զորս աղէկ օրոված են ու խղճի մտօք կը գործարեն: Ու զեռ է՛ն անխոտու վանելի միջոցներուն չեն վարանիր դիմել...:

Ասիկա՛, գաղափարի կռիւն ու ասոնք, հակառակորդներ... ո՛վ խաղբութիւն...:

ԱՍՊՍՏՍԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

ԴՈՒՍՃԱՆՆԵՐԸ

ՄՆԵՆՆԵՐԸ

2.

— Միրելիս Սողոմոն, խնդիրը երևան կուգայ եւ երկուքս ալ մէկ զնգակի զոհ կ'երթանք:

— Ուրեմն զնգակն է քեզ սարսափեցնողը, եղբա՛յր Մեթալիկ:

Սողոմոնի այդ հարցումին վրայ քիչ մը ատեն լուս կեցաւ: Իրա՛ւ օր զնգակին սարսափը չէր գինքը այդ պահուն խոտ վողը: Ներսիդին, իր մութ սրտին խորերուն

մէջ, անօտլօր ու անողօք ձայն մը յանկարծ արթնցեր էր ու ա՛լ անընդհատ անհանդիստ կ'ընէր գինքը: Այդ օրը Քզիրին հետ ժամադրութիւն տուած էր: Բայց դեռ գիւղէն զուրս չելած՝ իր մէջ խղճիխայթին անակնկալ ու յեղակարծ սթափումէն կանգ առնել ստիպուելով՝ իր անցեալ կեանքին անխոստովանելի շահատակութիւններուն հաշուեկշիռը կանգնել յամեցեր էր ու ինքն իսկ սօսկու՝ մով ու պժգանքով համակուեր էր օտորին ու քօտմեկի արարքներու այդ վիթխարի կուտակումին առջեւ: Հոս իր զրպարտութեան զոհ գացեր էր իր մէկ գրացին: Հոս իր օուտ վկայութիւնը տարիներով զնտաններու տանջանքին գատապարտեր էր իր մէկ ուրիշ արենակիցը: Այդ անարդ մատնութիւններու հաշուեկշիռն իւրաքանչիւր տողին վրայ՝ իր շահախնդիր մեղօսակցութեամբն ու դաւաճան մեքենայութիւններովը թշուառացած հայերու աղիողորմ պատմութիւնը կար: Ականջները խուցուցեր էր ան աղերանքի աղաղակներուն, որոնք իրեն ուղղուեր էին: Սիրտը քարացուցած՝ աչքերը գոց՝ մատնութեանէ մատնութիւն, ոճիրէ ոճիր նետուեր, մխրձուեր էր ան, առանց քայլ մը ընկրկելու, առանց ամենագոյզն խղճահարութիւն մը զգալու:

Ու հիմա ինքն ալ անկարող կ'ըլլար հասկնալու թէ ուրիշ ո՛ւր խղճիխայթին ձայնը եկեր ու իր ներքո սպրդեր էր: Շատ անօրոշ վրդովմունք մը եղեր էր նախ աօրիկա, որ հետզհետէ սաստկացեր ու մշտական ինքնալըկում մը դարձեր էր: Իր շարագործութիւններուն յաճախանքին տակ ընկճուած՝ գիւղին քահանային մօտ վազելու, անոր փելոնին տակ մտնելով իր թունաւոր հոգիին ամբողջ դառնութիւնը հոն թափելու և իր գետնաքարէ կեանքին բովանդակ փտութիւնը խոտոտմանելու վերջնական օրոշումը տուած էր, երբ Սողոմոնը — անարգութեան իր մեղսակիցն ու վարպետը — վրայ հասաւ ու՝ առաջին նայուածքին՝ կողակց թէ Մեթալիկը տարօրինակ արամազրութիւններու մէջ կը գանդաչէր: Քզիրը՝ առանց իր զարմանքը մատնելու՝ անոր մօտեցաւ ու իր սովորական փաղաքուչ ձայնովը անոր ականջն ի վար բաներ մը փոփօաց:

— Գիտե՛մ, ըսաւ Մեթալիկը՝ լակոնական՝ ու կողմնակի ակնարկ մը ձգեց Քզիրին վրայ: Հրէշի պէտ բան մը երևցաւ ան իր աչքին: Մինչև այդ օրը իր եղբայրակիցը ուտումնասիրելու ո՛ր է փորձ չէր ըրեր: Հիմա ամէն բան տարօրինակ կը թուէր իրեն այդ մարդուն վրայ: Երեսը՝ կիտովին ծամածոտած՝ կեղծիքին պատկերն իսկ էր կարծես: Անոր ձայնը արհեստական շինձու շեշտեր ունէր ու իր շունչը նողկալիօրէն սուտ կը հոտէր: Փորձող ու անպիմադրելի օատանան եղած էր ան, որուն պիւսիսն ազգեցութեան տակ Մեթալիկ շշմուած՝ ամէն ցածութեան տրամադիր ու կարող գտնուեր էր:

— Ամենքը մէկտեղ մէկ թակարթի մէջ բանելու է՛ն յարմար ժամանակն է, յարեց Սողոմոնը իր շիւ աչքերէն մէկը թթմելով,

— Շիտակ եօ, ըսաւ Մեթալիկը մեքենաբար, առանց որոշապէս գիտնալու թէ ի՛նչ ըսել կ'ուզէր:

— Ուրեմն, արի՛ երթանք, հրաւիրեց Սողոմոնը անոր թեւէն քաշելով:

— Ո՛ւր, ի՛նչ բանի համար, հարցուց Մեթալիկ, կարծեօ բան մը լսած չըլլար, ու զգուանքը անոր դէմքը ծամածոնց:

— Խօն՛իմ ես, ի՛նչ ես, բացազանչեց Սողոմոն, ըսածնեքօ չհասկցա՛ր:

Մեթալիկ՝ հարցական արտայայտութեամբ մը՝ ըսուաւ պի՛շ պի՛շ Քզիբի երեսը նայիլ:

— Կատակը մէկդի՛, ըսաւ Սողոմոն: Երէկ Լողմանը՝ սխալ լուրի մը վրայ՝ իր խումբով Չաթախ մեկնեցաւ ան սրիկաներուն հանդիպելու, բայց հիմա յայտնի եղաւ որ Ուստա Մակարի տան մօտ գտնուող մարագներուն մէջ ուրխութիւն ընելու վրայ են: Եթէ յաջողինք ծամանակին Չաթախ լուր մը հասցնել՝ երկուքս մէկտեղ անմիջապէս պաշտօնի կը կանչուինք: Պին պաշիին խոստումները կը յիշես անշուշտ:

— Այո՛, ըսաւ Մեթալիկը, համակերպածի ու զատապարտուածի խուզ շեշտով մը, զլսելը կախ, աչքերը գետնին սևեռած:

— Ուրեմն ոտքի ե՛լ, վճոնց Քզիբը, մինչեւ կէս օր լուրը հասցնելու ենք, ապա թէ ոչ որսը ձեռքերնուս կը փախցնենք:

Մեթալիկ մեքենաբար ոտքի ելաւ, ու երկուքը մէկ Չաթախ տանող ճամբան ձեռք առին:

Թանձր մշուշը վարք, Եշիլ Ըրմաղի տելթային վրայ այնպէս մը տարածուած էր, որ կարծեօ Սև Ծովը՝ իր ակերէն գուրս խուժելով՝ ամբողջ զաշտագետները իր տակ ծածկած ըլլար: Աշնան կծու ցօփտը սկսեր էր ինքզինքը զգացնել տալ: Երկու գաւաճաններուն համար օակայն ոչ մէկ շքեղ տեսարան գոյութիւն ունէր: Ու շրջակայ վայրի բնութեան համասփիտ խաղաղութիւնն ու մաքրութիւնը կարծեօ պղծելէն՝ ներքին խորհրդաւոր թափէ մը քշուած՝ երկուքն ալ կը շտապէին, կը վազէին հեւ ի հեւ: Պալախորի շրջանն ըրին և Գափու Գաւան շրջապատող փոքրիկ լեռնաշղթային անտառապատ ստորոտէն զարնելով՝ դէպի հարաւ շեղեցան գետին հունը անցնելու համար:

Մեթալիկ, մինչեւ հօտ, անզգալաբար վազեր էր, առանց խօսք մը արտասանելու, առանց իր ընկերին հարց մը տալու: Ինք իր մէջ ամփոփուած, թխմուած՝ անընդհատ կը մտտար ան: Իր ներօրիկին բարձրացող, պոռացող ձայնին հետ մշտական կոխի մը մէջ էր: Իր այդ անասնական, անզիտակից վազքին մէջ՝ ամէն ճիգ թափեց զայն լեռնանցիւ, զայն գուրս հանելու իր ներօկն, վանտելու, նետելու և անոր վրայ կոխկռակելու: Բայց անկարելի եղաւ ատիկա: Ծամբան յաճախ փորձուեցաւ մատուրները ականջներուն մէջ խօթել, կար-

ծելով թէ ձայնը գուրսէն կուգար: Սակայն, այն ատեն, ձայնը բազմապատկուեցան, վայնասունի փոխուեցան իր ներօրիկին: Սոսկաց: Մինչեւ գետեզերքը հասնիլը՝ Մեթալիկ թուլցած, ընկճուած, յաղթահարուած մարդկային ձորձ մըն էր արդէն եւ գետը, բնական պարիսպի մը պէս, անոր յառաջխաղացումը կ'արգիլէր: Հոտ աւազ ներուն մէջ ցցուած ապտառով մը վրայ ինկաւ, նրօտեցաւ: Քզիբն ալ համոզեց որ նօտի վայրկեան մը ու ջանաց իր մէջ ոռնացող ձայնին արձագանքը գոնէ անոր հոգիին անդրադարձնել, ու ասպատակներու մահացու գնդակին սարսափը անոր առջին դրաւ նորէն:

Քզիբը անդրդուելի էր: Գնդակը զայն չէր սարսափեցնէր: Գետէն անդին այդ մահուան վախէն աւելի հզօր բան մը կար, պաշտօնը, դրամական վարձատրութիւնը, որ զինքը կը քաշէր, կը մագնիսացնէր ու վրտանդներ արհամարհելու իօկ կարող կ'ընէր:

Հրէշային ու շնական քահնազանով մը խնդաց Մեթալիկի այդ ազդարարութեան վրայ: Մինչեւ հիմա միտափն գործեր էին, միտօրին զրպարտեր, ամբաստաններ, մասններ էին ու հոտ, այդ պահուն, իրենց երկուքին ճամբաները կը զատուէին, ու Մեթալիկ, հայ գաւաճանութեան նախակարագետներէն մէկը, զատալիք ոգի մը ցոյց կուտար ահա: Այս բանը անբացատրելի էր Սողոմոնին համար: Գնդակէն տարբեր, գնդակէն սօսկալի բան մը ըլլալու էր Մեթալիկը ահաբեկողը: Քզիբը չէր կրնար երբէք մտածել թէ իր մեղսակցին մէջ զղջումի կամէութիւններ արթնցած ըլլան: Անկէ աւելի դժօխային խորհուրդներ ունեցեր էր ինքը ու շատ անգամ՝ ոճիբին կատարման առջեւ իր շուարումներուն մէջ Մեթալիկն եզած էր անոր միջոց ու ելք ցուցնողը: Անջ հնար էր որ անոր հոգիին մէջ զղջումը համարձակէր սպրդիլ: Քզիբը չէր կրնար այդ մտքին հետ հաշտուիլ, և սակայն ուրիշ ո և է բանով ալ չէր կրնար այդ վայրկեանին անոր խռովքն ու յամառութիւնը մեկնել:

— Այսօր իսկ այդ գնդակները վերջ կը գտնեն, եթէ ծամ առաջ խորհուրդիս հետեիս եւ երկուքս մէկ Չաթախ վազենք, ըսաւ Քզիբը, իր ընկերը համոզել ջանալով:

— Անոնք մէկ երկուք չեն, անոնց թիւը անորոշութեան մէջ է ու վաղը մէկին տեղը հազարներ կը բռնեն:

— Անոնք ալ կը մասնեն՛նք...

Այդ բառը Մեթալիկը սարսափացուց: Հիմակ էր որ անոր նշանակութիւնը ամբողջովին կ'ըմբռնէր, հիմակ էր որ իր դէմ ծառացող մեղսակցին մէջ իր հոգին կը տեսնէր իր բովանդակ օբլետեթեամբը: Ահաւորօրէն պղծալի տեղը մը ունէր ան, ու Մեթալիկ չէր կրնար հասկնալ թէ ի՛նչպէս մինչեւ այդ օրը կրցեր էր արեւուն տակ շնչել, ապրիլ ներօրիկին պահելով այդ անպատում նետութիւնը:

— Կը մասնենք, բայց ատոր վերջը չի գար, հա-

բիւրնեք մատնեցինք, անոնց տեղը հազարներ բուսան  
և հաստատ գիտեմ թէ մահը հիմա մեր ետեւէն կը պատի-

Սողոմոնը համոզելը անկարելի էր: Աղուէտի խո-  
րամանկութեամբ օժտուած՝ խելացի ու ճարպիկ՝ իր այդ  
բոլոր առաւելութիւնները դէպի չարը գործածելու ան-  
յազ ձգտում մը ունէր: Եթէ օր մը տօանց ուրիշի մը  
Քաս հասուցած ըլլալու իրիկան ընէր՝ գիշերը չէր կըր-  
նար հանգիստ կերպով աչքերը գոցել ու խորդալ: Ա-  
մէն մարդու հետ վարուելու ձեռք գիտէր, ամենուն  
չօրին կ'երթար, բայց ամէն պարագայի մէջ իր անձ,  
նական շահէն միայն կ'առաջնորդուէր, անոր կը հե-  
տամտէր: Կառավարութեան պաշտօնեաներուն առջեւ  
կատուի պէս կը սմբէր, անոնց շուրջը կը թփուտուէր,  
անոնց իւրաքանչիւրին կամքը կատարելու փութկոտ  
պատրաստականութիւններ ցոյց կուտար ու էն անարգ  
յանձնառութիւններուն կ'ենթարկէր ինքզինքը, բաւ էր  
որ իր քօակը մտնելէ բան մը ըլլար ատոնց ծայրը:  
Ազգ, հայրենիք, արժանապատուութիւն իրեն համար  
գոյութիւն չունէին: Ամէն անգամ սր այդ բառերը ար-  
տասանուէին իր քով, հայրենասէրի գառնացած ու սրտցա՝  
հսկեր կ'առնէր, բայց՝ մինակ մնացած՝ իր խաւարամած  
խղճմտանքին մէկ նմարին մէջ կը նետէր իր քօակը ու  
միտին մէջ կը լեցնէր այդ ազնիւ ու նուիրական բա-  
սերը ու միշտ նմարը քօակին կողմը կը հակէր:

Միտասեան ասպատակային խուճիկներէն երեւն գալէն  
ի վեր, թիւրք տեղական իշխանութեան աջ բազուկն  
եղած էր Քիչի Սողոմոն: Ամէն անգամ սր բմբուսնե-  
րուն սր տեղ պահուած ըլլալուն հոտը կ'առնէր՝ իս-  
կոյն քաղաք կը վազէր: Իր բոլոր ջանքերը՝ մինչեւ  
այդ օրը՝ ապարդիւն մնացել էին ու քանի՛ քանի՛ ան-  
գամներ քաջերու գնդակէն հազիւ հազ ճողոպրեր էր:  
Այսօր զանոնք խմբովին մարտին մէջ բռնել տալը  
մէկ հատիկ ու անձեռնունեղի առիթ մը կը համարէր,  
զոր ձեռքէ փախցնելը աններելի՝ պիտի ըլլար իրեն  
համար:

Ու ինչեք չէին անցնէր այդ գոեհիկ Քիչիին մտքէն:  
Հայ կարիճներուն քանի՛ սր հատին դիակը պիտի պե-  
տին փռուէր, քանի՛ մը հատը՝ վիրաւոր՝ իր ստեղծուն  
առջեւ պիտի գալարուէին, օրհասական հոգիներով,  
իսկ մնացածները՝ շղթաներու տակ պրկուած՝ մինչեւ  
Չարչամպա պիտի քաշկատուէին: Հոն գայմագամը—հին  
չէրքէզ աւագակ մը—իւր կանակը պիտի ծեծէր ու կուրծ-  
քէն նշան մը պիտի կախէր: Պիտպաշին անոր հաւա-  
տարմութիւնը պիտի գովէր ու Չամուշը անոր ախանջէն  
աֆիւրիմ պիտի պոսար, ու այդ ամենուն հետ քանի՛ մը  
հարիւր ոսկի նուէր պիտի արուէր իրեն, ու՝ ո՛վ գիտէ,  
թերեւս քարութեանէ աւելի բարձր պաշտօնի մը կ'ան-  
չուէր ինքը: Իրականութեամբ ու իր ցնորքներուն միջեւ  
եղած հեռաւորութիւնը արնքան աննշան կը թուէր իր  
աչքին, որ ամէն բան իր ձեռքին տակ պատրաստ

ունենալու վտահութեամբ՝ ինքզինքը կուտէր Մեթալիկի  
յարուցած սնակնկալ խոչընդոտին առջեւ յամենալու  
ստիպուելուն:

—Քալէ՛, քալէ՛, պոռաց Սողոմոն, իր ձայնին բու-  
մանդակ ուժգնութեամբ, ու Մեթալիկի օձիքէն բռնելով՝  
քանի՛ մը անգամ ցնցեց գանի:

—Հիւանդ եմ, պուխս կը ճաթի կոր, ասկէ անդին  
չեմ կրնար երթալ, քալ մը անգամ առնելու անկարող  
եմ, բաւ Մեթալիկը ապառաժին վրայ աւելի տեղա-  
ւորուելով:

Սողոմոն գաժան աչքերով, վերէն վար չափեց  
իր մեղոակիցը: Մեթալիկի դէմքը կաս կարմիր կտրած  
էր, կարծես իր ամբողջ արիւնը հոն վազած ըլլար:  
Կատակ ընելու երեւոյթ չունէր ու, իրաւ, կրնար հիւանդ  
ըլլալ: Սողոմոն մինակ երթալ չէր ուզեր սակայն: Իր  
բոլոր գծնէ շահատակութիւններուն մասնակցած էր Մե-  
թալիկը: Մինչեւ վերջը այդ մարդուն հետ երթալ ու  
բռնած էր և նոյնիսկ եթէ Մեթալիկ այդպէս իյնար,  
մեռնէր՝ անոր դիակը ուսին՝ մինչեւ Չամախ վազելը  
աչքն առած էր Սողոմոն:

Քիչ մը մտածելէ վերջ՝ Քիչիին դէմքը ուրախու-  
թենէն յանկարծ սկսաւ ճառագայթիլ:

—Շալակս եկուր, շուտ, հրամայեց ան, Մեթա-  
լիկի առջեւ ծունկ չարքելով:

Մեթալիկ՝ շուարած՝ պապանձեցաւ, մնաց: Այդ  
օրինակ առաջարկութեան մը չէր սպասեր ու զայն զի-  
մագրաւելու: Բաւ պատրաստուած չէր: Փանուտի բու-  
լոր ճամբաները կը գոցուէին իր առջեւ, Քիչ մը անաւ-  
նալէ վերջ, Սողոմոնի ուտերուն վրայ բարձրացաւ:

Քիչը իր վարտիկը հանեց, Մեթալիկին տուաւ ու՝  
մինչեւ կէս մէջքը մերկ՝ ձեռքին մէջ երկար ձող մը բռնած  
դէպի գետը յառաջացաւ:

Սողոմոնի ուտերուն վրայ ծառացած՝ Մեթալիկը  
վերջնականապէս վճած էր ջուրէն անդին չանցնել, ինչ  
գինով ալ որ ըլլար: Իր ամբողջ կեանքը լեցնող չա-  
րագործութիւններուն վերջին օահմանին հասած ըլլալ  
կը կարծէր այդ գետեզերքը ու հոտ իր աչքին տակ  
վազող ջուրը՝ բուն լուգանքով՝ մը՝ իր սեւ անցեալին  
բոլոր աշտէն մաքրուելու հրապուրիչ փորձութիւնը կու-  
տար իրեն:

Նախ խորհեցաւ Սողոմոնի վարտիքը՝ անոր վզին  
փաթտել և տեղնի տեղը խեղդել զայն: Բայց այդ հրօ-  
կային ուժը վաղուց ծանօթ էր իրեն, ու իր կողմէն  
ատանկ ջանք մը, գործնական էլք մը չունենալէն զատ  
կրնար իր կեանքն ալ վտանգել: Չորը նետուիլ խորհե-  
ցաւ: Բայց այդ տեղ ալ ուրիշ մտահոգութիւն մը գինքը  
կեցուց: Չէր ուզեր ինքզինքը մատնել և ատկէ զատ  
միտքը գրած էր վտանգի լուրը հասցնել խուճիկն: Կ'ուզէր  
ու կը նկատէր գործին մէջէն վարպետութեամբ մը դուրս  
գալ և կատկածի բնաւ տեղի չի տալ: Երկար մտածելու

տան չունէր: Քզիրը ճամբուն կէսը ածնու յօտ էր  
և քանի մը վայրկեանէն միւս եզերքը կը հասնէր: Այլ  
անկէ ետ գառնալը անհնարին էր: Մեթալիկ իր վերջին  
որոշումը տուաւ:

Սողոմոն՝ մինչև կէս մէջը ջուրին մէջ՝ գետը  
անցնելու վրայ էր, երբ Մեթալիկ սկսաւ ծունկերը  
զոզողացնել, ձեռուրները թուցնելու պէս բաներ մը  
ըրաւ, Քզիրին զուլիւր թողուց ու մեծածի նման վար  
կախուեցաւ: Ջուրերուն հոսանքին է՛ն զօրաւոր տեղն  
էր և Սողոմոնը հագիւ թէ կարող էր իր քայլերուն  
ուշադրութիւն ընել: Մեթալիկի վիճակը զինքը սոսկալի  
զրութեան մը մէջ կը գնէր: Կատարովիներէն սկսաւ ինք-  
նիբն խօսիլ, ու անլուր լուսանքներ տեղացուց անոր  
վրայ, անոր ստըը կամթեց: Բայց ոչ իր հայհոյութիւն-  
ներուն պատասխան կուտար ան, ոչ ալ իր կամիքները  
ազգեցութիւն կ'ընէին անոր: Մեթալիկ գիակի նման  
այս ու այն կողմը կը տատանէր և կենդանութեան ո և է  
նշան ցոյց չէր տար: Սողոմոն մարած կարծեց զայն և  
ձեռքի ձողը ջուրի հոսանքին տալով՝ անոր ստըբը  
իր հօւկու բազուկներուն մէջ սեղմեց ու բոլոր սատա-  
նաները օգնութեան կանչելով՝ իր ճիգերը կրկնապատ-  
կեց: Քանի մը անգամ իր մեղաակցին անունը տուաւ ու  
զայն ցնցեց: Մեթալիկ ձայն ձուն չէր իտար: Քանի  
մը քայլ ետ, և ահա Քզիրը իր հաւասարակշռութիւնը  
կորսնցուց ու գտնու ցցուած խարակի մը առջեւ՝ իր  
բեռով միասին՝ ծունկի եկաւ: Ջուրը երկուքն ալ ծած-  
կեց, ու յորձանուար, որ անոնց շորս կողմը կը պատէր,  
երկուքը մէկ կլլել կը օպանար: Պահ մը վերջը Քզիրը  
զուլիւր ջուրէն դուրս հանեց: Այլ աւելի ուժով յորձանք  
մը անոր վրայ խուժեց ու այս անգամ զայն հունէն  
բաժնելով զէպի լճացած ջուրերու խո, երբ քչեց: Պող  
ջուրին ազգեցութեանէն Մեթալիկ՝ ինքզինքին գալ կեղ-  
ծելով՝ կեանքի նշաններ ցոյց տուաւ, ինքն ալ կը զգար  
որ վառնող երկուքին համար ալ յօտալուտ էր. ուստի  
Քզիրին երրորդ անգամ գայթակարէն՝ քանի մը աքաղիներ  
տալով ստըբը անոր բազուկներէն ազատեց ու երկու  
գաւաճանները սկսան ալիքներէն աւելի իրարու գեմ  
ողորիլ:

- Աւանակ...
- Իշու քուտակ...
- Ու հայհոյութիւնները կ'ընդմիջուէին նոր յորձանքի  
մը վրայ հասնելէն ու քիչ մը վերջը նորէն կը լսուէին:
- Թող տո՛ւր կ'ըստմ...
- Չը պիտի տամ...
- Կը խեղդուիք, զաթըր օղլու զաթըր...
- Աւելի աղէ՛կ, կամ երկուքս ալ կը խեղդուիք,
- կամ երկուքս ալ կ'ազատիք...

Ցեանելով որ Քզիրը զինքը թող տալու միտք չունի  
ու մինչեւ իսկ իր գիակը ջուրին միւս եզերքը քաշ  
կրթակու պատրաստակաւնութիւն ցոյց կուտայ, Մեթա-  
լիկը վերջին ջանք մը ըրաւ. ու ճարպիկ շարժումով մը՝

Քզիրին սկանչներէն մէկը իր ակունքներուն մէջ առաւ ու  
այնպէս մը խածաւ որ Սողոմոն՝ կսկիծին սաստկութե-  
նէն՝ երկու ձեռքը մէկանց զէպի այդ կողմը տարաւ ու  
մուկեցին՝

— Քու հօրդ սօրը մեռելը... քու եօթը պորտոգ...  
քֆրեւէն՝ անոր կզակին ան սնկ ուժով բուռնցք մը ի-  
ջեցուց, որ Մեթալիկ Քզիրին ականջն ալ միասին առ-  
նելով՝ ջուրը մխրճուեցաւ: Չօրաւոր ալիք մը այդ պա-  
հուն վրայ հասնելով, երկուքը իրարմէ բոլորովին գա-  
տեց ու իւրաքա՛ չիւրը զէպի տարբեր ուղղութիւններ  
բռնեց: Երբ նորէն ինքզինք ին գտան, իրար էտրսնցու-  
ցած էին ու երկուքն ալ ճարպիկ լուրորդներ, այլ ես  
վտանդէ ազատ էին: Քզիրը, յուսահատ ժամ առաջ միւս  
ափը հասնել կը նկրտէր, առանց ուշադրութիւն դար-  
ձընելու, որ ականջէն արիւնը առատօրէն կը հոսէր ու  
անոր մէկ մասը պակսեր էր:

Անգամ մը ազատուած Քզիրի ճանկերէն՝ Մեթա-  
լիկ զէպի ետ լողալ սկսեց և քանի մը վայրկեան շան-  
ցած գետափը հասաւ ու հոն, ապառաժի մը ետին  
կծկաւած, նայուածքովը Սողոմոնը փնտռեց: Միւս ափին  
վրայէն ան ալ Մեթալիկը կ'սրսնէր ու անոր հետքը  
բոլորովին կորսնցուցած, խեղդուած կարծեց զայն ու  
մտադրեց՝ վերադարձին՝ գիակը փնտռել:

Ականջին մէկ ժառը կտրած, անվարտի ու ամբող-  
ջութեամբ խմուած՝ բաւական սրտփալէ վերջ՝ Քզիրը  
Չաթախ վազեց:

Մեթալիկ երկար ատեն աչքերովը իր վարպետին  
հետեւեցաւ, առանց իր գրութիւնը մտածելու, առանց  
իր թըջած ըլլալն իսկ զգալու և երբ Քզիրը բոլորովին  
ծածկուեցաւ իր տեղութեանէն, մէկէն ցնցուեցաւ ան ու  
բռունցքը զէպի անոր անհետացումը երկնցնելով՝

— Մատնիչ մատնիչ, մատնիչ, ոռնաց ան, առա-  
ջին անգամ կարձեռ ըմբռնելով իր հօգիին խորունկէն  
այդ բառին ահաւոր նշանակութիւնը, առաջին անգամ  
ուժնորէն զգալով անոր բովանդակ թունաւոր գառ-  
նութիւնը:

Յանկարծ սկսաւ խնդալ, գիւսին քրքիջով մը: Թքեր  
էր ու բերնէն կտոր մը կարմիր միւս ինկեր էր գետին:

Քզիրի ականջին կտորն էր:

Գետին մէջտեղէն մինչեւ ափը լողալը կարծես զար  
մը տեսած ըլլար, այնքան փոխուած կը զգար ինքզինքը  
Մեթալիկ: Իր անցեալին հրէշութեան գրուագիւրը,  
վիթխարի համեմատութիւններով, որ աչքին առջեւ կու-  
գայիս և ինքը չէր կրնար հաւատալ հիմա որ իր կեան-  
քին պատմութիւնն եղած ըլլար ասիկա: Երկար ատեն  
աչքերը սեղուն՝ գետին ալիքներուն հետեւեցաւ, որոնց  
մէջ նշարել կարծեց իր գաւաճանութիւններուն մահա-  
ցած գիակը, որ՝ յորձանք: յորձանք չընելով՝ զէպի  
ժովը կը տարուէր: Միանգամ ընդ միշտ ազատագրուած  
զգած ինքզինքը այդ անաչքութեան տնցեալին յաճա-  
խանքէն ու Եշիւ Հրմազը մաքրագործումէ աւտզան մը

թուեցաւ իրեն, ուր ժտնել ելլելն ի վեր օրրուեր, մաքրուեր, թեթեւցեր, վերածնեւեր էր ու իր ներսիդին պուսացող ձայնը՝ հոն, ալիքներուն մէջ խեղդուած՝ ալ զինքը չէր շարշարեր: Հիմա խղճմտանքը հանգիստ էր:

Իր վերանորոգութեամբը յափշտակուած՝ երկար ժամանակ այդ պող քարին ետին կծկտած մնաց ու տեսնողը զայն աղօթելու ջերմեռանդ գիրքին մէջ պիտի գտնէր: Քանի՜ անգամ աչքերը վեր, դէպ ի երկինք վեր, ցուց ու ամէն անգամ՝ ամօթէն կաս կարմիր՝ վար խոնարհեցօց: Նորէն փորձեց, կրկնեց, երեքնեց, մինչեւ որ զգաց, ապահովուեցաւ թէ իր դէմ ելլող, զինքը յանդիմանող մը չի կայ, ու օրտին մէջ կուտակուած ամբողջ դառնութիւնը՝ յանկարծական փղձկուումով մը՝ դուրս սուսաւ: Արցունքը հեղեղի պէս կ'իջնէր անոր երեսն ի վար ու կը լուար, կը մաքրագործէր մատնիչի հոն խարանուած դրոշմը:

Մեթալիկ զղջացած էր:

Ինքն ալ չէր գիտեր թէ որքան ատեն մնաց այդ վիճակին մէջ ու ինչպէս կրցաւ մնալ: Մինչեւ ծուծը թրջուած՝ անոր ակոսները անընդհատ կը կափկափէին, Բայց իր գոյութիւնը, իր մեղապարտ անձը մոռցած էր ան, ու երբ ոտքի ելաւ՝ թեթեւ գտաւ ինքզինքը: Վեր նայեցաւ: Արևը իրեկնադիմին յօտեցեր էր: Մեթալիկ անմիջական ու նուիրական պարտականութիւն մը ունէր կատարելիք: Ամբողջ մարմնովը պրկուած խելայեղ թափով մը՝ նետուեցաւ, ու զիւսհարի նման՝ դարվերն ի վեր սկուս վազել:

Մեթալիկ ինքիրմէն ելած, ինքզինքը գրեթէ կորօշնցուցած էր: Ուր երթալն իսկ չէր գիտեր: Փոխանակ ֆէսթէնէ կէտիչի՝ թէքֆուրի ճամբան ձեռք առեր էր: Ժամէ մը աւելի անընդհատ վազել վերջ, Գափու Գառայի և թէքֆուրի միջև դտնուող խոխոմին հանգիպեցաւ: այդ բանը զինքը ուշաբրեց: խորհեցաւ թէ իր ճամբուն վրայ ոչ թէ գետակներ այլ առուններ իսկ գոյութիւն ունենալու չէին:

Կօճի մը վրայ նստաւ և՛ զլուրը երկու ձեռքերուն մէջ առնելով՝ յիշողութիւնը կեդրոնացնելու անհուն ու ցաւազին ջանք մը ըրաւ: Չգայ թէ խուճապն ու անձկութիւնը զինքը աւելի մոլորեցնելով, կրնային իր նպատակէն բոլորովին շեղել: Պաղարիւնութեան ու ինքնամփոփումի պէտք ունէր: Պահ մը ինքզինքը, իր տարաբնուած հոգին ժողվեց. յետոյ արեւին ուղղութեանը նայելով՝ շիտակ ճամբան բռնեց: Խրաքանչիւր բոպէ որ կ'անցնէր, ահեղ ու անվերջ ճգնաժամի մը պէս կուգար իրեն: Մեթալիկ գիտէր թէ Բզիբը շատոնց Չաթախ հասած, իրողութիւնը ամբողջութեամբ պատմած ու իր մատնութիւնը խղճի մտօք գործադրած էր: Մեթալիկի բոլոր ջանքերը անօգուտ եղեր էին, արտօրալը զինքը շուարումի ենթարկեր էր ու միւս կողմէ՛ կամաց քալելն ալ վտանգը կը մօտեցնէր: Անտառին թաւուտներէն ազատելով՝ լեռան գագաթն հասաւ: Հոտ հարկ

տեսաւ կանգ առնել ու ետին՝ Եշիլ Ըրմազի հունը տանող ճամբան նայեցաւ: Չինուած մարդերու խումբ մը նշմարեց, որոնք կածանին ոլոր մոլոր դարձքերէն վեր կը բարձրանային: Լօղմանն էր: Կասկածիլը յիմարութիւն էր: Ինչ որ ալ պատահէր, պէտք էր, անհրաժեշտ էր թախ, վազել: Ու վազեց, տենդէն լեզուն խածած կը խոյանար, թրջուած ըլլալը ա՛լ արգելչ չեղաւ անոր քայլերուն: Կարծես բազէի թևեր ունենար, թաւուտէ թաւուտ կը սուրար ցնորատու արագութեամբ մը: Տօմպալախենց գեղին յօտէն անցաւ, բլրակէ բլրակ թաւա և Ուստա Մակարին տունը հազիւ իր աչքին ինկեր էր, երբ կին մը՝ դաման դէմքով՝ անոր անցքը կտրեց ու հոգեւտ հրեշտակի նման անոր առջեւ տնկուեցաւ:

Լուսեան էր:

— Մատնի՛չ, ճչեց ան, ու իր ձեռքին տակ ինկած առաջին քարը անոր ճակտին իջեցնելու կը պատրաստուէր, երբ Մեթալիկ չորեքթաթ անոր ոտքը իյնալով.

— Կուգան կոր, կուգան կոր, պոռաց, շատուր են, պիտի բռնեն, սպաննեն, շո՛ւտ լուր հասցո՛ւր...

Լուսեան սահմոկած մնաց: Մեթալիկի խելայեղ երևութիւնը, անոր ոտքէն մինչեւ զլուրը թրջած ըլլալը, անոր արիւնոտ բերանը, վերջապէս անոր անձին բովանդակ տարօրինակու թիւնը Լուսեան յանկարծ վրդովեցին և ան՝ ձայնը մեղմելով՝ Մեթալիկին ականջէն ըսաւ.

— Խենթեցար, ինչ եղար, ո՞վ կուգայ կոր, ո՞վ պիտի բռնեն...

— Մատնե՛ց, մատնե՛ց, Բզիբը մատնե՛ց, Լօղմանը հիմա իր խումբով հօս կրնայ հասնիլ, անմիջապէս յուր հասցո՛ւր, եթէ ինձի չես թողուր...

Լուսեան իսկոյն հասկցաւ կացութիւնը: Բայց դէպի մարագը դեռ քայլ մը չառած՝ տեսաւ որ Մեթալիկը կը դանդաչէր ու վայրկեան մը յետոյ, արիւնը քթէն դուրս խուժեց ու մարած ինկաւ, փոռուեցաւ հոն յօգնասպաս մարդը:


Տարապայմանօրէն փափուկ վայրկեան մըն էր Լուսեային համար: Հին մատնիչը իր ոտքերուն տակ երկընցած էր, ու զղջուած անոր խեղճ դէմքին վրայ կը ճառագայթէր: Լուսեան պահ մը իր կնոջական սիրտը լսեց, զգածուեցաւ Մեթալիկի այդ ողբալի վիճակէն ու զայն արթնցնելու միջոցներուն վրայ կը մասձէր՝ երբ հեռուէն մարդիկներ տեսաւ, որոնք դէպի իրենց կողմը կուգային: Տնտնալ չէր ըլլար: Մտեցաւ, գրկին մէջ առաւ Մեթալիկը ու հսկայի մը պէս դիմացի մացառուտը վազելով զայն ցախերուն տակ ծածկեց ու կայծակի արագութեամբ դէպի մարագը վազեց ու շաքալի ուլուլուն բարձրացուց: Իրեն պատասխանեցին պահակները: Հազիւ քանի մը վայրկեան անցած՝ վանողին ծուխը հովիտը լեցուցեր էր արդէն:

Կը կուռէին:

(Շարունակելի)

# ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

## ԴԻՐՔԵՐԸ ՊԷՏՔ Է ՃՇԴՈՒԻՆ



Միութեան խնդիրը իր երկրորդ յատկանշական փուլին մէջ մտած է:

Հոգեկան բարդ ու թելադրական վիճակներ ծայր կուտան ասկէ, անկէ, երևան կուզան հետզհետէ, հակառակ զանոնք ծածկելու, կամ պատճառաբանելու համար եղած բուռն ջանքերուն—անոնց շուրջը շտալուած զգուշաւորութեան ու ճարտարութեան տարապայման խնամքներէն իսկ մասնուելով:

Պէտք չէ վրդովուիլ:

Կը հասկնանք օակայն անձկութիւնը անոնց, որոնք՝ Միութեան բաղձալի իրականացումին վերջապէս մտնեցած ըլլալ հատարէ ետք՝ յանկարծ՝ տխուր հասառուներու առջեւ՝ պիտի ստիպուէին տարակուսի, վհատիլ: Այդպիսիներուն—ու ամէնէն անկեղծներն ու օրացաններն են անոնք—պիտի խրատէինք զոպել իրենց դառնութիւնը ու մանաւանդ զգուշանալ զայն օւրիշներու փոխանցելէ—հաւատքը էն անհրաժեշտ տարրն ըլլալով՝ ո՛ր է ազնիւ հետապնդումի:

Քիչ մըն ալ համբերութիւն:

Էականը՝ պաղարին մնալն է մինչեւ վերջը: Ու պէտք է հեռու կենալ անհամբեր եզրակացութիւններէ, գահավէժ վճիռներէ ու յախուած մղումներու անձնատուր ըլլալէ:

Ասիկա, կը կրկնենք, մենք պարտք զրած ենք մեր վրայ, ու մարդկօրէն բոլոր կարելի եղածը պիտի ընենք այս փափկանկատ եղանակէն չչեղելու:

Բայց, միևնոյն ատեն, թերացում մը, զրեթէ վառութիւն մը յանձն առած պիտի ըլլայինք, եթէ լուսանցնէինք կարգ մը իրողութիւններու վրայէն, որոնց բնա՛ւ պատճառ չենք տուած մեր կողմէն եւ օրօնք գործը կնճոտելու, ժողովուրդին ուշադրութիւնը տարտղանելու և կամաց կամաց՝ ցոփելու ու նպատակաւոր զարաւղումներով՝ Միութիւնը վիժեցնելու յայտնի բնայթն ունին:

Ասիկա ալ հաւատարմապէս պարտականութիւն մըն է օրուն առջեւ չենք կրնար թերանալ—նոյնիսկ գործին սիրուն, գործին անկեղծութեանը, աներկիցիութեանը ու ապահովութեանը համար:



Ըօինք արդէն, թէ անցեալին մէջ, Միութեան

խնդրին շուրջը, ժընէլ ու Լոնտոն, խորհրդաւոր ու անվերջանալի բանակցութիւններ կատարուեցան, մասնաճիւղերէ ամէն կողմ շրջաբերականներ տեղացին, չէզոքներ միջամտեցին, միջնորդներ երեւան եկան, մեղադրանքներ, ամբաստանութիւններ արձակուեցան, բայց այս բոլորը ո՛չ մէկ արդիւնք ունեցաւ, ո՛չ մէկ համաձայնութիւն կրցաւ գոյացնել:

Միութեան իրականացման այս ձգձգումին ու հետզհետէ դժուարացման պատճառները անաչառօրէն ու անողոքաբար բացատրելով, մենք՝ ո՛չ միայն մտքերնուս շանցուցինք, վայրկեա՛ն մը, առ ու ան գատապարեւ, ասոր կամ անոր ուտը բեռնել ո՛ր եւ է պատասխանատուութիւն, այլ, ընդհակառակը, ամենուն հետ հաւատարմապէս բաժնեցինք անցեալին մէջ Միութեան դէմ մեղանշած ըլլալու ամէն մեղադրանք:

Այս յստակ ու անխնայ բացատրութիւններէն վերջը, կը յայտարարէինք.

«Մինչեւ հիմա թեր ու դէմ մեկնութիւններու առարկայ եղաւ կուսակցութիւններու դիրքը Միութեան խնդրին նկատմամբ: Մեկը անցեալով ո՞ր «բոխ»—«բաս»ներով զրաղեա՞ռ ո՛չ ժամանակ, ո՛չ տրամադրութիւն ունեցնել, համադրուած ըլլալով որ այդ քաշկռտաքնները ո՛րքան կը վնասեն Գործին»:

Այս բացորոշ ու կարուկ խօսքերով՝ կը կարծէինք պէտք եղածին աւելի յստակօրէն, ուժգնօրէն, ու վերջնականապէս հասկուցած ըլլալ ամենուն, թէ ա՛յ ետս անցեալը գոյաբոխէն չէր կրնար ունենալ Միտքեան խնդրին համար: Կը կարծէինք նոյնպէս՝ առանց ինքնարդարացման ո՛ր եւ է ճիգ փորձելու, կամովին ընդունելով անցեալին մեր պատասխանատուութեան բաժինը՝ միանգամ ընդ միշտ առաջն առած ըլլալ ամէն առարկութեան, ամէն խճրմանքի, ամէն փախուստի:

Խնդրին արմատական ու ապահով լուծում մը տալու հաստատ ու վճռական առաջադրութեամբ՝ զայն կը դնէինք ուրեմն այնպիսի ամուր ու այլամերժ հօդի մը վրայ ուր ա՛լ կարելի ու ներելի չպիտի ըլլար զայն վիժեցնել ջանալ—առանց ջախջախիչ ապացոյցները տալու բացարձակ, սիւթէմաթիք չկամութեան մը:

Մենք՝ Միութեան համար ամէն զօհողութիւն յանձն առնելէ ետք, կ'աւելցնէինք.

«Եթէ կան դեռ մեծ ու փոքր զօհողութիւններ, օրօնք կը վրիպին մեր յիշողութենէն, կանխաւ կ'ընդունինք զանոնք ալ»:

Այդքան օրտբաց ու անվերապահ յայտարարութիւններէ վերջ, անմիտելի իրաւունքն ունենալ կը հաւատարմութիւնը սպասելու՝ եթէ ո՛չ նոյնքան օրտբաց ու անվերապահ՝ գոնէ զրական, ուղղակի, պաշտօնական ու հրատարակաւ—նպատակաւոր կամ աննպատակաւոր պատասխանի մը,—պարզ, կտրուկ ու ուղղամիտ «այո՛» կամ «ո՛չ»ի մը: Կը սխալէինք... յանգուզն երա՛զ մը... տարապայ

ման յաւակնութիւն մըն էր ատիկա մեր կողմէն: Կը խօստովանինք որ ասանկ կառկած մը չի կրցինք ունենալ, առջի բերան: Ընդհակառակը երեւոյթները հզօր ու բարեբար լաւատեսութիւն մը կ'արթնցնէին մեր մէջ:

Առաջին սպաւորութիւնը սքանչելի էր — սպասուածն էր:

Դաշնակցական կիտապաշտօնական օսկաններն անգամ առաջին թափով՝ պատշաճ համարեցին գնահատել մեր բոլորանուէր զոհողութեան պատրաստականութիւնն ու հրաւերը:

Հաւատարմութիւնը ու ակնկալութեամբ շարունակեցինք ըստ պատել:

Այս միջոցին ամէն կողմէ ընդունեցանք բազմաթիւ շնորհատրական նամակներ ու համակրութեան ինքնաբեր ու որտաբուխ խօսքեր, որոնք թանկադին գրական մըն էին մեզի ժողովուրդային ընդհանուր խանդավառութեան և որոնք՝ սկսուած ճիգին մէջ՝ հզօր օբրտապնդում մը կը բերէին մեզի, աւելցնելով վերջնական բազմաթիւ իրականացումին մեր հաւատքը:

Փորձը աղուօրօկած էր: Կարեւոր քայլ մը առնուած էր արդէն, ու մենք գոհութեամբ արձանագրեցինք զայդ մեր էջերուն մէջ:

\* \* \*

Ծուօակայն այս բոլոր յուսադրիչ երեւոյթներուն մէջէն քիչքիչ սկսան նշմարուիլ զրգօրիչ, չաբամիտ ու հակասական խրտուածներ, որոնք կը ձգտէին գիտակցաբար կամ կուրօրէն խանգարել գեղեցիկ ձեռնարկին շարժ գոյացած զգացումներու ու տրամադրութիւններու եղբայրականներդաշնակութիւնը:

Ինչ պատահած էր յանկարծ, որ մեր Միութեան կոչը ամենէն աւելի փութկոտութեամբ սղջունողներէն ումանք անբնական ճիգեր ընել կ'ելլէին անոր շինիչ ու բարեբար ազդեցութիւնը կտորելու, անոր քօտրէն սկարացընելու համար:

Չենք գիտեր:

Ու եղան մարդիկ որ մէկուն յաղթութեանը, միտին պարտութեանը, մէկուն Միութիւնը շատոնց մարտած ըլլալուն, միտին զայն օտարներով սրտաւառն օրտառուզ գիտը ըրին:

Մենք բնականաբար չէինք կրնար այս ամէնը մեր կոչին պատասխան նկատել, ու կը սպասէինք—ու դեռ կը սպասենք—որ՝ ամէն բանէ առաջ՝ պաշտօնապէս ընդունուած հոշակուէր «փոխադարձ անտահման զոհութեան» մեր մէջտեղ զրած էական սկզբունքը:

\* \* \*

Ու ահա՛ սկսան չէզօքի մը խօսքը ընել, օսանկ ընդհատուած խօսակցութիւն մը շարունակելու բնական

ու անտարբեր ձեւովը: Միութեան չէզօք միջնորդի մը գոյութիւնը՝ ընդունուած, հարկադրուած բանի մը պէտեւրեւան կը բերուէր, որպէս թէ հայ յեղափոխականները — ինչպէս առջի օրէն կը շեշտէինք—կարող չըլլային՝ առանց միջնորդի՝ շտկէ շիտակ իրարու հետ խօսելու, մէկզմէկ հասկնալու եւ իրարօր «այս» կամ «ո՛չ» ըսելու:

Չէզօքն ալ, իր կարգին, անհարկի փութկոտութեամբ մը, յամառեցաւ իր միջնորդի գերին մէջ: Ու հիմակ ալ իր 1900ի դիմումներուն պատմութեանը բռնի այմէնութիւն մը տալ նկրտելով՝ զայն հրապարակ կը հանէ: Իր գիտնալիք բանն է:

Մենք միութեան օրտանց փափաքող ենք: Տակաւին կ'օւզենք պահել հաւատքնիս անոր իրագործմանը մասին: Ու խնդիրը չկնճօտելու համար չպիտի պատասխանենք ո՛ր և է զրգօրմի, ո՛ր եւ է մեքենայութեան, ըլլա՛յ ան չէզօք կամ յեղափոխական անհատներու կողմէ:

Ըօինք արդէն ու կը կրկնենք, թէ անխախտ կերպով համոզուած ենք, որ անցեալէն ո՛ր եւ է վերջուցում վտանգաւոր միայն կրնայ ըլլալ Միութեան գործին ու ամբողջ անցեալը իր բոլոր քաշկոտուցներուն հետ թաղելով միայն պիտի կրնանք Միութիւնը իրականացնել: 96ի կամ 900ի մեռած պատմութիւններ—որոնք մէջէն անվթար ու անազարտ զուրօ չկրնալ գալու վտան ալ չունինք—խառնշտկելով գործ շինմը է մտքերնիս թէ աւրել:

Անցեալին մէջ յանցաւորը փնտտել կ'օւզէք անպատճա՛ւ: Մի՛ յօգնիք: Մենք ամբողջ յանցանքը կը շալկենք: Ահա՛ մենք բարձրաձայն կը յայտարարենք՝

—Մենք ենք յանցաւորը...  
Աօրկա չէ՛ փափաքածնիդ:  
Լա՛ւ:  
Բայց վե՛րջը...:

\* \* \*

Հիմա մեղքի—վարձքի հաշիւը թօ՛ղ միանգամ ընդ միշտ փակուի: Ու մտիկ ըրէ՛ք:

1. Մենք Միութեան խնդիրը ձեռք առինք, առանց որ և է չէզօքէ կամ ներգործական թելադրուած ըլլալու, այլ որովհետեւ օգտակար կը նկատենք միութիւնը Յեղափոխութեան գերագոյն տեսակէտովը:

2. Մեր Միութեան առաջարկը 96էն մինչեւ 900 տեղի ունեցած անհատական կամ հաւաքական տխուր ու ապարդիւն բանակցութիւններուն հետ ո՛ր և է կապակցութիւն չունի:

3. Որպէս զի նոր թիւրիմացութիւններ, կնճօտուութիւններ, «ըօի»—«ըօաւ»ներ չծագին, կը հրաւիրենք յեղափոխական մարմինները հրապարակաւ տալ իրենց նպատատար կամ աննպատտ պատասխանը:

5. Գլխաւոր պատասխանը, որուն կը սպասենք, այն

է թէ կ'ընդունուի փոխադարձ անսահման զոհողութեան մեր սկզբունքը:

\* \* \*

Դիրքերը պէ՛տք է ճշդուին:

Եթէ կ'ազդուի Միութիւնը, այն ատեն ուղղամտօրէն, եղբայրօրէն պարզե՛նք ձեռուընթիւ իրարու, առանց անիմաստ ու վատաոգոյ վերլուծումներու, առանց, ախտաւոր ունակութեամբ մը, զիրար խայթել, ճանկոտել, պղտիկցնել խուլօրէն ճարտարութիւն:

Իսկ եթէ չազդուի Միութիւնը, թո՛ղ ըսեն ուրեմն բացէ ի բաց, առանց խորհրդաւոր ու մանուածապատ դարձուածքներու, առանց ծածմելու, առանց չէզոքներ, միջնորդներ առաջ քշելու:

Մենք աչքիապուք խաղալու ժամանակ ու տրամադրութիւն չունինք: Ո՛չ ալ յաւիտենապէս Միութեան Խնդրով կրնանք զբաղիլ, որովհետեւ մենք ալ ունինք մեր յեղափոխական գործը, որ այլապէս աւելի կարեւոր է և որ չի կրնար վայրկեան մը կանգ առնել:

Ու թո՛ղ չեղեն—ու չի պիտի կրնան արդէն— մեզ մեղադրել բոլոր չէզոքները, բոլոր անտարբերները, Յեղափոխական Գործին չմասնակցելու համար Միութեան պատրուակին կառչած բոլոր ամենհի հայրենասէրները:

Ա՛լ մտիկ չենք կրնար ընել:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Ամէն կողմէ մեզ կը դիմեն հարցնելով թէ Ի՛նչ «Չուրի վրայ է» Միութեան Խնդիրը և թէ Ի՛նչ պէտք է հասկնալ Դրօշակի վերջին յայտարարութեանն:

Վերի յօդուածով կը կարծենք զօհացում տուած ըլլալ առաջին հարցումին: Գալով երկրորդին՝ պատճառ մը չունինք մեր ամբողջ մտածումը՝ միշտ, միևնոյն բացարձակ անկեղծութեամբ՝ յայտնել վարանելու:

Հնչակեան Կուսակցութեան ու Հայ Ժողովուրդին զգացումները թարգմանող մեր ծանօթ յայտարարութիւնները որպէս զի վճռական ու գործնական հողի մը վրայ առաջնորդէին, հաստատէին Միութեան խնդիրը՝ կը սպասէինք որ Դրօշակն ալ համանման տրամադրութիւններով, պատասխանէր մեր կոչին: Չենք ուզեր ըսել որ բողոքովին յուսախաբ մնացինք մեր ակնկալութիւններուն մէջ, բայց պէտք է նաև խոստովանիլ որ Դրօշակի հակիրճ յայտարարութեան ոգին ու պարունակութիւնը չի կրնար գոյացուցիչ համարուիլ Միութեան շերտահանող կուսակիցներուն համար:

Մեր սա խօսքերէն վերջը, թէ «Միութեան իրա-

զործումին համար Հնչակեան Կուսակցութիւնը կը նշկատէ որ ո՛չ միջնորդի և ո՛չ ալ պայմանի պէտք ունենալու են յեղափոխական մարմինները» և թէ «Իտէ՛ ալի մը սիրուն եղբայրակցելու համար միջնորդի մը, մանաւանդ չէզոք միջնորդներու պէտքը նախատինք մըն է համոզուած ու զիտակից յեղափոխականներուն ու յեղափոխական կուսակցութիւններուն» «Արևմտեան Բիւրօ»ն դեռ կը սպասէ «Չէզոքի մը կողմէ ստանալիք վերջնական խօսքին»:

Ամէն բանէ առաջ յստակ ու աներկդիմի ըլլալ որոշած ըլլալով՝ կը յայտարարենք, որ մենք չենք գիտեր չէզոք մը, որուն բանակցութեան պաշտօն մը յանձնած ըլլանք: Նոյնպէս մեզի իմաց արուած չէ թէ «Արևմտեան Բիւրօ»ն չէզոքի մը պաշտօն յանձնած ըլլայ մեզ հետ բանակցելու համար:

Աւելորդ չենք սեպեր օսկայն նկատել թէ «Արևմտեան Բիւրօ»ն լաւ կ'ընէ Միութեան մասին ո՛ր եւ է բանակցութիւն սկսիչ, հիմնուելով միայն Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան պաշտօնապէս և հրապարակաւ ըրած յայտարարութիւններուն վրայ, քան թէ սրբօրէն սպասելով չէզոքի մը, որ Միութեան Խնդրին վրայ բանակցելու ո՛ր է յատկութիւն չունի եւ ո՛չ ալ յանուն Հնչակեան Կուսակցութեան խօսելու իրաւունք:

Կեդրոնական Վարչութիւնը՝ ճշմարիտ Միութեան մը փափաքովը տողորուն՝ չի կրնար այօքան փափուկ խնդրի մը լուծումը յանձնել անհատի մը, որ ո՛չ յեղափոխական կեանք ունեցած է, ո՛չ ալ երկու կուսակցութիւններուն մէջ երկար տարիներէ ի վեր Միութեան համար կատարուած բանակցութեանց և անոնց ներկայացուցած զժուարութեանց տեղեակ է:—Իսկ՝ առանց այս նկատումներուն ալ՝ Կեդրոնական Վարչութիւնը՝ նոյնպէս անշուշտ «Արևմտեան Բիւրօ»ն՝ խնամակալի պէտք չունի: Մենք ինքզինքնիս կարող կը զգանք մեր գործը մեր ձեռքով տեսնելու: Ինչո՛ւ բռնի գահմէք ընեն չէզոքները:

Գոնէ մենք մեր կողմէն՝ դարձեալ միջնորդի մը պէտքը չենք զգար առ այժմ, և կը կարծենք որ այդ տեսակ միջնորդներու ներկայութիւնը՝ փաստէն զատ՝ խեղ մը չունի, երբ, ինչպէս կը հաւատանք, բանակցող կողմերը զիտակցութիւնն ունին իրենց պարտականութեանց եւ առանց երկրորդական մտահոգութիւններէ ազդուելու՝ կը ջանան անկեղծօրէն իրագործել Միութիւնը:

Բայց եթէ «Արևմտեան Բիւրօ»ն կը կարծէ որ միջնորդ մը— և չէզոք միջնորդ մը, ինչպէս կ'ըսէ ինքը— անհրաժեշտ է՝ մենք չէ՛ որ պիտի ուզէինք Միութեան առջեւ խոչընդոտներ ստեղծել այս պատճառաւ, եւ պատրաստ ենք իրեն նազած, իրեն ընտրած միջնորդը ընդունիլ, եթէ այս վերջինը յանուն Դաշնակցութեան խօսելու իրաւասութիւնովը ներկայանայ մեզի:

Մենք՝ մեր կողմէն՝ միջնորդ չպիտի նշանակենք: Կեդրոնական Վարչութիւնը կամ իր ներկայացուցիչը անձամբ պիտի վարէ բանակցութիւնները:

Մենք կը կարծենք որ երկու Կուսակցութիւններուն վարիչ կամ պատասխանատու մարմինները կամ անոնց լիազօր ներկայացուցիչները զէմ առ զէմ դանուելու են, իրենց իսկ ձեռք առած Միութեան խնդիրը:

Ասիկա՝ շատ մը առաւելութիւններէ զատ՝ առաջը պիտի ածէ կարգ մը թիրիմացութիւններու, որոնք հարկաւորաբար պիտի գոյանային, եթէ դուրսէն միջնորդ մը գտնուէր:

Ասից զատ, Միութեան համար ամէն խօսք ու ամէն գործ պաշտօնապէս առաջ տարուելով, եթէ՝ հակառակ մեր ակնկալութիւններուն ու հաւատքին՝ Միութիւնը չիրագործուի, այն ատեն, պաշտօնական յարաբերութիւններէն բացայայտօրէն դուրս պիտի գայ, թէ ինչու Միութիւնը իրականացնել անկարելի եղաւ և թէ ո՞րն է այն կուսակցութիւնը, որ, ո՛ր եւ է նկատուով, արգելք եղած է Միութեան:

Ասով կացութիւնը ճշգրտած, անստուգութիւնը վերջացած և ժողովուրդը երկարատեւ ու տաժանելի մղձաւանջէ մը՝ գտնէ մասամբ՝ ազատած կ'ըլլայ:

Արդ, Հնչակեան Կուսակցութիւնը պատրաստ է կուսակցական ամէն շահ ու նկատում զօհել Միութեան համար, և եթէ նոյնը ընել յանձն առնէ նաև Դաշնակցութիւնը, հայ ժողովուրդը կրնայ այժմէն իսկ կատարուած իրողութիւն մը համարել Միութիւնը:

Եւ որպէս զի նորանոր ձգձգումներու, նորանոր թիրիմացութիւններու տեղի չտրուի՝ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը՝ բացի այս հրապարակային յայտարարութիւններէն՝ մասնաւոր նամակ մը պիտի ուղղէ «Արեւմտեան Բիւրօ»ին, Միութեան իրագործումին քանի մը հիմնական կէտերը առաջարկելու համար՝ որոնք, ընդունուելուն պէս, ուրիշ բան չի մնար ընելիք, եթէ ոչ երկու կուսակցութիւններու կողմէն լիազօր ներկայացուցիչներ կարգել, որպէս զի Միութեան իրագործումը օտարազրն և ընդհանուր ժողովի մը գումարման միջոցները որոշեն:

Նոր Կեանքի յառաչիկայ թուով «Արեւմտեան Բիւրօ»-էն մեր օտանալիք պատասխանը կը ճանչցնենք Հայ ժողովուրդին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



Հայկական Հարցին շուրջը գիւնագիտական շըրջանակներու մէջ տիրող մտահոգութիւններն ու եւրօպական մամուլին արտայայտած համակրական օգնութիւնները, մեր ուշադրութիւնը 6-7 տարի ետ կը դարձնեն, մեզի կը յիշեցնեն այն տենդոտ ու արհաւիրակ օրերը, ուր Հայաստանի մէջ կատարուած կոտորածներուն, հոն պատահած սոսկալի աղէտներուն առջեւ ամէնքը լեզու ելած էին: Մեր վրայ կը խօսէին, մեզմով կը հետաքրքրուէին օտարները, ամբողջ եւրօպական մամուլը իր էջերուն կարեւոր մասը կը լեցնէր հայկական աղէտներով, կը բողոքէր, կը բարկանար, շանթեր կ'արձակէր զէպի անշարժ դիւանագիտութիւնը, կը դատապարտէր քաղաքագէտներու անտարբերութիւնը որով թող կուտային որ անհաշիւ քանակութեամբ հայեր մորթուին:

Սասուն, Տիարպէքիր, Էրզրում, Վան, Երզնկա, Ատանա, Հաճըն, ամէն կողմ ծուխը կը բարձրանար, հայ արիւնը կը վազէր, սակայն «Հայկական Խնդիր»ը իր այս օրուան սուր ու կտրուկ վիճակը չունէր, Եւրօպացիին մեզ չէր ճանչնար այնպէս՝ ինչպէս այսօր, եւրօպացիին գաղափար չունէր Երլտրզի դիւահարին ահաւոր բարբարոսութեանը վրայ այնչափ՝ օրչափ հիմա:

Ու սեպտ. 17ին երբ Հնչակեան ժողովուրդային ցօյցը տեղի ունեցաւ, պատահեցան նոյն իսկ օտուար թուով Եւրօպացիներ որոնք հայկական խնդրի մը գօյլութիւնն անգամ չգիտնալով, միամիտ ենթադրութիւնն ըրին թէ անիկա մէկ քանի անձերու ըմբոստ մէկ ընթացքն է որ չի կրնար ո՛ր և է քաղաքական կարեւոր նշանակութիւն ունենալ:

Կոտորածները, թալանները, աւերումները սակայն հետզհետէ շատցան, և ամէնքը սկսան արթննալ: Փըրանսական մամուլը յայտարարեց, թէ «սկսելու է պաշտօնական կոիւ մը մղել հայոց խնդիրը պաշտպանելու համար»:

Թիւրքերու և հայերու մէջ եղած ընդհարումները, քիւրտերու, լազերու, չէրքէզներու կողմէն գործուած օարօսափելի օճիրները ամբողջ Հայաստանը կարմրեցուցին, ու Հայոց պատրիարքը ո՛չ մէկ տեղեկութիւն կրնար ստանալ Հայաստանէն, վասն զի թղթատարի և հեռագրական հաղորդակցութիւնները դադրած էին: Ի զուր կը դիմէր դեօպաններուն որ օգնութիւն մը փութացնեն, անոնց պատասխանը կտրուկ էր և մերժողական. «Առայժմ անհնար է որ գործին խառնուինք» կ'ըսէին, քանի որ եղածներուն մասին ո՛ր և է տեղեկութիւն չենք ոտացած, և Դուռը բոլոր մեզքը հայերուն վրայ կը բարդէ:

Ու անդին՝ Ռուսիա մը կար մանաւանդ, որ ամէն օր և ամէն միջոցներով կ'արտայայտէր իր չկամութիւնը հետեւելու անգլիական քաղաքականութեան որ կ'աշխատէր իր հետեւէն քաշել միւս պետութիւնները և անհանգիստ ընել սուլթանը: Ռուսիան որոշած էր ամէն միջոց ի գործ դնել և չի թողուլ որ թիւրքիան վեատուի:

Տրապիզոնէն մինչև միջագետք, հարիւր հազարաւոր ժողովուրդներու դիակները փութեցան: Հետզհետէ ժողովուրդներու խղճմտանքը վրդովեցաւ: Ճառներ, միթիւններ մէկը միւսին յաջորդեցին, անգլիական ժողովուրդին յուզումը, մասնաւորապէս, օպառնական համեմատութիւններ առաւ, բայց եւրոպական դիւանագիտութիւնը քարացած կեցաւ, ու ցոյց տուաւ որ եթէ ամբողջ Հայութիւնը կոտորուի, իր կողմէն բալլ մը իսկ չպիտի առնէ առանց ակնհերե շահերու, առանց ընտիր պատառ մը կու տարու հաւանականութեան:

Համիտի ուղարկութենէն չվրիպեցաւ այս իրականութիւնը, որ հաստատ համոզում մը դոյացնել տուաւ իրեն, թէ բոլոր ճառերը, խօսքերը, ժողովները կատակերգութիւններ են միայն: Բ'չ աւելի, Բ'չ պակաս:

Սուլթանը 20-25 տարիէ ի վեր եւրոպական պետութեանց հակընդդէմ շահերուն և նախանձոտ նկատմաներուն կոթնած էր, առանց հոգ ընելու, առանց պըղտիկ երկիւղ մը կրելու, թէ ինչ զազանային խժոժութիւններ կը գործուին իր վաւերացումովը և թէ ապականութեան ինչ խորութիւններու կը հասնի իր կառավարութիւնը:

Ու կատակը կատարեալ ընելու համար, Համիտ թուղթ մըն ալ ստորագրեց, և Կ. Պոլսոյ թերթերուն մէջ հրատարակել տուաւ աննշան զեկուցում մը, թէ բարենորոգումներ պիտի կատարուին...

Ու զաւելարը զմայրելի էր: Խրաքանչիւր մեծ պետութիւն այդ «զեկուցումին» մէջ իր յաղթանակը, իր փառքը փնտռել փորձուեցաւ:

Անգլիական մամուլը իր երկրի դիւանագիտութեան ճարպիկ մէկ յաղթութիւնը հռչակեց զայն: Փրանսական լրագիրները միաձայն վերագրեցին զայն Ֆրանցոսուս զաշնակցութեան հաշտարար և խաղաղասէր գործութեան: Վիէնայի մամուլը շուրջ միտներէն վար մնալ, ու իր կարգին, աշխարհի առջեւ յայտարարեց, թէ սուլթանի զեկուցումը Կ. Պոլսոյ աւտորիական դեսպան, Պ. Կալիօի դիւանագիտութեան կանխահաս պըտուղն է:

Ամէն կողմ, ամէն կառավարութիւն յաղթական կամար մը կ'երեւակայէր իրեն համար, օակայն զեպքերը ցոյց տուին որ յաղթութեան պօսկին արժանացած էր միայն անիկա՝ զօր յաղթուած հռչակեցին... — Սուլթանը:

Եւրոպական մամուլը բողոքեց, Անգլիա և Ամերիկա միթիւններ սարքեցին Կլատութոն, Սուլիպուրի Ֆիլիպեաններ տեղացուցին, անգլիական նաւատորմը շարժուած

մը փորձեց, շատ բան ըօին, շատ բան գրեցին, բայց սուլթանը յաղթեց, վասն զի ոչ ոք ուզեց խօսքէն ցործի անցնել:

Երեւակ նիզակակցութիւնը շուրջ գործել, օրովհետեւ ուղղակի շահ չունէր Հայաստանի մէջ, Փրանսան շուրջ օրովհետեւ թիւրքերուն հետ բարեկամ մնալու պէտք ունէր՝ իր բրիտանական հակառակորդը Եգիպտոսէն խախտելու համար: Անգլիան վախցաւ, մանաւանդ զրգոյելու և օտարացնելու իր հնգկամահետական հպատակները:

Տեղի Ֆրոնտիկը որ հայկական հարցի ամենաշերտ պաշտպանն էր, ամբողջ անգլիական դիւանագիտութիւնը և օպառնալիքները նմանցուց երկունքէ բոնուած լեռան, որմէն մուկ մըն է ծներ...

Սուլթանը այս անցեալին մէջ հաշիւ մը ունէր, որուն ճշդութիւնը ո՛ր և է տարակուսի տակ գնող պատճառներ գոյութիւն չունէին. անիկա դիտէր, թէ եւրոպական պետութիւնները զեռ ևս օտարափով կը նային Արեւելեան հարցին վրայ, և չեն ուզեր բանալ խնդիր մը, որուն լուծումը կարող չեն գուշակել և սրմէն, ընդհակառակը, աիեզերական պատերազմի երկիւղը կը նախազգան:

Պատմութիւնը մինչև հիմա ամբողջովին արդարացուց իր այդ հաշիւը: Ո՛չ մէկ պետութիւն համարձակեցաւ, եւ ո՛չ մէկուն թող արուեցաւ սուլթանին դէմ մինչև ճամբուն ծայրը երթալ:

Եւ իրօք, 20 տարիէ ի վեր, Բ'չ մէկ պետութիւն օրտանց փափաքող էր առանկ փորձի մը:

\* \* \*

Իսկ հիմա՝ 300,000 հայերու դիակներուն առջև Եւրոպայի խաղաղասիրական:՞ պապանձումը ինչք՞ ծառայեց: Խաղաղութեան ստուե՛րը գօնէ մէկ օր տեճուեցա՛ւ թիւրքիոյ մէջ:

Իրողութիւնները հակառակը կը պատասխանեն:

Վերջին ատեններս Պոլսոյ դեսպաններուն ընթացքը յայտնի կը ցուցնէ, թէ պետութիւնները ա՛լ չեն կրնար համբերել գաւառներու մէջ տիրող կացութեանը: Անիշխանութիւնը կը տիրէ Մակեդոնիա, Ալպանիա, Հայաստան և Եմէն: Հոգ չէ թէ ամենէն լաւատեճ եղանակովը զեռ խօսին այդ վիճակին վրայ, ապականուած, փճացած, կուրացած թիւրք պաշտօնեաները, որոնց մէջ պատուոյ ամէն զգացում մարած, ջնջուած է և անձնական շահն է միայն որ զիրենք կը հետաքրքրէ:

Թայմզի մէկ թղթակցութեան մէջ, օրոշ պարզուած է, թէ մեծ ու պզտիկ բոլոր առճիկ պաշտօնեաները կատարելապէս զիտակից են օր իրենց երկիրը գէպի կտրճանում կը տարուի, ուստի ինքզինքնին անկարող զգալով առօր առաջն առնելու՝ իրենց միակ

մտածու՛մը եղած է կրցածնուն չափ զրամ քով քովի բերել, որպէս զի երբ քայքայու՛մը հասնի, կարենան իրենց կաշին ապահովել:

Պալատականներ, նախարարներ, պաշտօնատարներ, դատաւորներ, ներքին բոլոր զինուորական եւ ուրիշ պաշտօնեաներ զխաւոր զբաղում մը միայն ունին, այն է՝ մէկգմէկ լրտեսել եւ կայտերական շնորհքի մը արժանանալ:

Դեռ պաննները վերջերս շատ խրոխտ լեզու մը բանեցուցեր են թէ՛ արտաքին գործոց նախարարին եւ թէ՛ պալատի առաջին քարտուղարին. բայց աննոցմէ ո՛չ մէկը կ'ուզէ վտանգը յանձն առնել այդ ամենը հաղորդելու օուլթանին որ անմիջապէս պիտի եզբակացնէ թէ անոնք անձնական նպատակ մը ունին:

Այսպէս, Թէվֆիգ փաշա՝ երբէք չէ հաղորդած օուլթանին այն ծանր գիտողութիւնները զոր ուղղեցին իրեն Ռուսիոյ եւ Աւստրիոյ դեռ պաննները Մակեդոնիոյ եւ Հայաստանի մասին, եւ որոնք յայտարարեցին որ եթէ յիշեալ գաւառներու անխիտանական վիճակը շարունակուի, ատիկա անխուսափելիորէն պիտի առաջ բերէ Հայաստանի եւ Քիւրտիստանի վիճակին փոփոխութիւնը եւ Մակեդոնիոյ ինքնավար նահանգի մը վերածու՛մը:

Թայմզ կը հաստատէ, թէ Ապտիւլ Համիտ ինքն է ուղղակի պատճառ այն անխիտանութեան որուն ախարկած են դեռ պաննները, եւ թէ ինքը այդ վիճակին մէջ կը գտնէ իր անձին ապահովութիւնը: Անիկա վտանգ կը տեսնէ Թիւրքերու ընկերային կապակցութեան մէջ եւ այդ վտանգին բազմաթիւ հողի կարուստը բան մը չէ իր աչքին:



Այս բոլորէն յայտնի կը տեսնուի թէ 1894-1901 մեծ փոփոխութիւններ առաջ եկած են: Ալ եւ Եւրոպան շանգիտանար հայկական խնդիրը: Դեռ պաննները չեն վախնար գործին խառնուելէ: Ֆրանսան կը խլրտի Ռուսիա չուզէր եւ չի կրնար ալ եւ «Թիւրքիոյ փնտ մը չի գալու» քաղաքականութիւնը շարունակել, վասն զի Մակեդոնիոյ յոռի վարչութիւնը, Հայաստանի մէջ գործուած ոճիրները, կրետէի մէջ ախրոզ դժգոհութիւնը հասած են այնպիսի առտիճանի մը որ խաղաղութեան մնայուն օպանալիք մը դարձած են: Այս պարագաներուն մէջ, պետութիւնները՝ Ֆրանսայի եւ Ռուսիոյ նախաձեռնութեամբ՝ կը ջանան կազմել համաձայնութեան հիմ մը, միահաղոյն դիմումներ ընելու Դրանս: Եւ՝ ի հարկին՝ մտադիր են օտիպել օուլթանը որ ո՛չ միայն գործադրէ Պերլինի դաշնագրութեան բոլոր տրամադրութիւնները Հայաստանի եւ Մակեդոնիոյ մասին, այլ եւ ապահովութիւն տայ ուրիշ բարենորոգմանց գործադրութիւնը եւ շատ մը անկախ խնդիրներու լուծմանը վերաբերութեամբ:

Այս առիթով կրետէի խնդրոյն կարգապարտեանը համար նոր լուծում մը եւս պիտի փորձուի:

Հապա օուլթանի նուէրնկալ բարեկամը, հարցնեն թերևս ընթերցողները:

Թայմզ կ'աւելցնէ թէ Ռուսիա շոշափած կ'երեւի Գերմանիոյ տրամադրութիւնները, իսկ Աւստրիոյ եւ Իտալիոյ հաւանութիւնը աներկբայ է: Գալով Մեծն Բրիտանիոյ, կը կարծուի թէ Լորտ Սոլիզպուրի՝ 94ի կոտորածներէն վերջ Հայաստանի մէջ բարենորոգումներ առաջարկելու նախաձեռնութիւնը ունենալէ յետոյ, եւ չպիտի կենայ ուժ տալէ մտադրուած գործողութեան:

Մնաց որ Ֆրանսա իր ներկայ պահանջութեան կարգապարտեանը ստիպելու իրաւունքէն հրաժարել չի պիտի ուզէ անշուշտ:

Հիմա բոլոր պետութեանց դեռ պանններուն կողմէ փութկոտութիւն մը ցոյց կը տրուի «գործին խառնուելու»: Աւստրիոյ դեռ պաննը Թիւրքիոյ արտաքին գործոց նախարարին հետ առանձին տեսակցութեան մը միջոցին յստակօրէն յայտարարած է թէ «թէպէտև Աւստրիական կառավարութիւնը ասիկէ առաջ հակառակտմ էր Մակեդոնիոյ ինքնավարութեան, բայց հիմա իր վեհապետը հաստատապէս որոշած է առաջարկել զայն՝ Չարին հետ ունենալիք իր յառաջիկայ տեսակցութեանը միջոցին եւ թէ իր բոլոր միջոցներովը պիտի պաշտպանէ այդ խնդիրը»:

Միւս կողմէ Տէյլի Քրոնիկը կ'իմանայ որ Ռուս դեռ պաննը Թէվֆիգ փաշային յայտարարած է, թէ ժամանակէ մը ի վեր ինքը իր վեհապետին հաղորդած չէ ամբողջ ճշմարտութիւնը Թիւրքիոյ իրական վիճակին մասին, բայց տեսնելով որ տաճիկ կառավարութիւնը քալ մը անգամ շանէր զայն բարուցելու համար, ինքը ստիպուած է ամէն բան հաղորդել եւ իր վեհապետը հիմա ամէն բանի տեղեկացած է:



Ինչ որ 95-96ի մեծ կոտորածներէն յետոյ անգլիական կառավարութիւնն ու ժողովուրդը ըրին, նոյնը այսօր Ֆրանսան ընել ցոյց կուտայ:

Եւ արդարեւ բնաւ տարակոյս չիկայ որ պարագաները, տրամադրութիւնները փոխուած են: Բայց ի՞նչ յոյս, ի՞նչ գերագոյն հաւատք կրնան ներշնչել մեզ այս բոլորը:

Եւ կամ պիտի կրնանք վերջապէս ընդունիլ թէ մեր յոյսերը պիտի իրականանան, պիտի կրնանք վերջապէս ամէն պատրանք, ամէն յուսախաբութիւն այս անգամ հեռու նկատել մեզմէ:

Պէտք է նախ ըօննք որ մեր դատին համար նպատատար կարգապարտեան մը յոյսը ո՛չ 96ին, ո՛չ ալ 1901ին միայն ունեցած ենք:

Շատ հինէն կը սկսի ու շատ անգամներ կրկնուած

է ազատութեան զուր հասած ըլլալու մեր արտակարգ խանդավառութիւնը որուն, աւա՛ղ, մինչեւ այսօր պատրանքը յաջորդած է դժբաղդաբար:

Մեծն Պետրոսի խոտածան վրայ Ինչ յոյսեր գրած էինք 1722ին, բայց 1724ն ալ պէտք չէ մոռնանք: Այնքան ողբերութիւններէ, պատրաստութիւններէ յետոյ Յունիս 12ի դաշնագրութիւնը Ինչ փորձանքներ բերաւ մեր զլիւն, երբ Ռուսաց կայսրը համաձայնեցաւ որ մեր թշնամին տիրէ Վրաստանին, ստորին Տաղիստանին և Հայոց նահանգներուն, որ էին ամբողջ Ատրպատականը, Նախիջևանը, Երեւանը, Գանձակը, Ղարաբաղը: մինչեւ Շիրվանի մէկ մասը:

Անկէ վերջ Սան Սթէֆանօ, Պերլին Ինչե՛ր չխօտացան մեզի:

1880, 81, 82, 90 թուականները նոյնպէս մեզ բերին պատրանքէ յաջորդուած վարդապոյն յօլսեր:

Այս ամէն փորձառութենէն յետոյ բան մը պիտի սպասե՛նք դեռ գիւանագիտական, քաղաքագիտական նորագոյն շարժումներէն:


Ներքի չէ բոլորովին ժխտական պատասխան մը տալ փութալը: Բայց նոյնքան երկիւղալի է, վտանգաւոր է, երբ մենք՝ Հայերօ՛՛ որ հաստատ առաջադրած ենք մեզ փճացնող, մորթող, լափող ստրկութենէն ազատուի՛լ մեր յոյսերուն մէջ ծայրայեղութեան հասնինք և սպասենք որ մեր ազատութիւնը՝ առանց մեր կողմէն կոխը շարունակուելու, իր ոտքովը գալու մեզի գտնէ:

Անգամ մը որ լոկ յոյսերով բաւականանալու ցաւազին տրամադրութեան մը կատշած մնանք, ա՛լ մեր մահը կնքած պիտի ըլլանք:

Ամէն հայ որ ուժ մը կը ներկայացնէ, ինչ կ'ուզէ ըլլայ, պէտք է պատրաստ գտնուի անկէ բան մը յօժարակամ ի սպաս դնել մեր դատին:

Ասիկա կըսենք, որպէս զի պատրանքի պարագային, գիտնանք, հասկնանք ալ եւ թէ լալը ու լոկ յուսալը չեն մեր պարտականութիւնները զէպի Գործը, զէպի յեղափոխութիւնը, զէպի մեր արդար դատը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ



ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՄԷՆ

Քաղաքական ժողովը երրորդ անգամ է որ հրաժարական կուտայ թաքրիտով Արդարութեան Գործոց նախարարութեան, բայց այս անգամ ալ կը մերժուի, վասն

զի Դուրը չուզեր որ հեռանան ազգային գործերու զբաղմանը գտնուող քանի մը հայեր, որոնք՝ պետական պաշտօնեաներ ըլլալով՝ չեն կրնար պէտք եղած կորովովն ու հաւատարմութեամբը պաշտպանել Հայ ժողովուրդին շահերը, մանաւանդ թէ ասոնք ստիպուած են միշտ զգուշաւոր ընթացք մը բանել և իրենց ամէն մէկ շարժումները համաձայնեցնել Դրան պահանջներուն ու քաղաքականութեան:

Արդէն Օրմանեանին ուզածն ալ այս է: Քաղաքական ժողովը իր մեծամասնութիւնը կորսնցուցած է, բայց Ինչ փորձ Օրմանեանին համար. Ինչ մնաց որ իր ուժն ու մեծամասնութիւնը կորսնցուցած չըլլայ Հայուն մէջ:



Արթին փաշան մեռաւ: Փճացած կեանք մը, որուն վերջ գտնելովը թերեւս բան մը պակտի մեր Դահլիճին, բայց իրէ՛ք՝ մեր ազգին: Իրեն հետ կը թաղուին իր զիւանազիտական տաղանդն ալ, աօխոցի քաղաքագետի խորամանկութիւնն ալ, իր վարչական կարողութիւններն ալ—որոնցմէ չօգտուեցաւ բնաւ իր զժբաղդ ցեղը և շատ անգամ փնտսեց իսկ: Ծառայ մըն էր, հաւատարիմ ծառան մնաց մինչեւ վերջը իր անարգ տիրոջ ու ծառայ մը կը մեռնի: Երթա՛յ բարով: «Ողորմիս» մը հանել չի գար մեզի իր ետեւէն, ո՛չ ալ անէծք:

Օրմանեան, իր սովորական դերասանական ձեւերով ու ուռուցիկ դարձուածքներով, վրան—բաց գովասանքներ ու ճոթոժարան ներբողանքներ շոյլեց անոր գազազին վրայ, բոլորովին մոռցած կարծեօ, թէ փաշային կենդանութեանը՝ իրարու հոգի առնել կ'ուզէին—ո՛չ թէ ազգին շահերը պաշտպանելու ազնիւ նախանձախնդրութենէ մը իրարու դէմ լարուած, այլ սուլթանին առջև հաւատարմութեան զրաւականներով մէջ զիրար գերազանցելով՝ փառքի ու բարայի տիրանալու համար:



Այս օրերս շատ միտք լուրեր հասան Մուշէն ու Սասունէն, թէ ևս ուրախութեան լուրեր երբէք հասած չունին: Թիւրք կառավարութիւնը Առաքելոց վանքը զօրանոցի վերածեր է, հօն գտնուող անմեղ որբուկները զուրս հանելով: Վանքին բոլոր ունեցածներուն տիրացրէր ձն քիւրտերը: Զօրքերը (համիտիէ) վանքը կողոպտելէ վերջ, օրրապղծներ են խորանը, պատկեր, գիրք և զլն կրակի են տուեր: Վանահայրն ու աշխարհական միաբանները սոսկալի շարչարանքներու ենթարկեր են՝ ջանելով որ «Հայ յեղափոխականներ կը պահեն»:

Ամբողջ Մշոյ գաւառը աղիւսարչ տեսարան մը կը ներկայացնէ: Սասնոյ մէջ տեղի ունեցած ահռելի եղեռնը դեռ իր մանրամասնութեամբը չկրցինք հասկնալ:

Յուսական հիւպատոսը Մուշ կը գտնուի և կ'ըսուի թէ Սասնոյ դէպքերը քննելու պաշտօն ունի: Ինչ որ ալ ըլլայ, այլ ևս այդ կողմերը հայ տարրին գոյութիւնը բնաշինչ ընելու համար սուլթանին ծրագիրը կէտ առ կէտ պիտի գործադրուի: Ուրիշ խնդիր է՝ եթէ եւրոպական պետութիւնները միջամտեն եւ օգնութեան հասնին այդ աբիւժասիրտ լեռնականներուն, որոնք դարերէ ի վեր՝ բռնութեան անկարող հալածանքներուն տակ կըրցած են պահել իրենց գոյութիւնը և տոհմային առնական նկարագիրը:

Կարնոյ, Վանայ կողմերէն ալ խիստ աննպաստ լուրեր կուգան: Չինուորական տուրքերը այնպիսի անողորմութեամբ մը կը հաւաքեն, որ ո՛չ մէկ շարժարանք ու անարգանք կը խնայուին ամէն դատակարգի հայերու:

\* \* \*

Պոլսոյ մէջ, իբր նոր բան, արգիլուած է Եզնիկ Եպիսկոպոսին այսուհետեւ քարոզել: Կառավարութիւնը խոտիւ պատուիրներ էր իր դերակատար ու հլու պաշտօնեայ Օրմանեանին, որպէս զի արգիլէ Եզնիկ Եպիսկոպոսին ո՛չ մէկ թաղի մէջ պաշտօնավարել: Նոյն արգելքը եղած է Վեհապետեան Մկրտիչ եպիսկոպոսին և Ներսէս վարդապետին նկատմամբ: Ասոնք ամբաստանուած են, թէ յեղափոխական քարոզներ կուտան և ժողովուրդը կը գրգռեն:

Օրմանեան, որ ժամանակէ մը ի վեր Ներսէս վարդապետը իր անձնական քարտուղարը ըրած էր, կարծելով թէ՛ զայն գործիք ընելով՝ պիտի կրնայ՝ անոր միջոցաւ՝ Սիսի կաթողիկոսութիւնը ձեռք ձգել՝ կը համոզուի վերջապէս, թէ այդ վարդապետը իր հաշիւներուն ծառայելու արամադրութիւն ունենալ չի թուիր, ու կը սկսի հետը գէշ վարուիլ և ատեն ատեն անոր յիշեցնել թէ կառավարութիւնը կասկած ունի իր մասին թէ յեղափոխականներու հետ յարաբերութեան մէջ է ու այդ պատրուակով կը պատրաստուի աքսորել զինքը, բայց Նորին Օրբազնութիւնը, հայրախնամ հոգածութեամբ, ամէն ջանք ի գործ կը դնէ որ այդ տխուր վճիռը չտրուի: Վարդապետը, փոխանակ «ահիւ եւ դողութեամբ» խոնարհելով շնորհակալութիւն ու նրախտագիտութիւն յայտնել փութալու իր ամենապատիւ պաշտպանին՝ ցուրտ անտարբերութեամբ մը կը պատասխանէ, թէ ինքը երբեք վախնալիք բան մը չունի և եթէ կառավարութիւնը ո՛ր է կասկած ունի իր վրայ՝ ազատ է զինքը ձերբակալելու և բանտարկելու: Վերջապէս, կ'երևի, թէ այս օրերս Վարդապետին ու Պատրիարքին միջև պաղուծիւնը չափազանցութեան հասնելով՝ քարտուղար հայր օսրբը օտիպուեր է Պատրիարքարանէն հեռանալ:

Կ'ըսուի նաև, թէ Խապանեան եպիսկոպոսին Ատանա մեկնելէն յետոյ, Օրմանեան կը փորձուի առաջարկել, որ Ներսէս վարդապետը իր մասին նպատաւոր

բաներ գրէ եկեղեցականներուն, որպէս զի իր կաթողիկոսական ընտրութիւնը յաջողի: Բայց Վարդապետը անկեղծօրէն, բացէ ի բաց կը մերժէ այդ առաջարկը:

Հիմա Օրմանեան իր կաթողիկոսացման մասին յուսահատ է: Յոյս կայ որ այս օրերս այդ խնդիրներն ալ լմնան ու Կիլիկիան ունենայ վերջապէս իր կաթողիկոսը:

Կոստավարութիւնը իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է այժմ այդ կողմերը: Մէկ նկատուածով կ'ուզէ որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը անխախտ ըլլայ եւ անջատ Պատրիարքարանէն, միւս կողմէն ալ կը խորհի իր հօկողութեան տակ անել այդ հոգեւոր իշխանութիւնը: Բայց սա յայտնի է որ ընտրեալին հեռաւտեօութենէն ու խոհեմութենէն շատ բան կախում ունի:

Բոլոր թիւրք պաշտօնատարները հակառակ են Օրմանեանին: Երբեք զգաւորն առաջին քարտուղարն է միայն որ բանած է զայն, անշուշտ գործիք ընելու համար:

Տէր-Ներսէսեանի շահատակութիւնները օտակալիկերպով գրգռած են Պոլսոյ ժողովուրդը: Կ'ըսեն որ անուած կաշառքներուն մէջ մասնակից է Օրմանեանը Գրան գործակատարին:—Բայց Պոլսոյ Հայութիւնը զըզուանքով կը բաւականանայ... ու ատ ալ անշարժ ու վաղանցուկ զգուանք մը:

Տեղի աճեկոտքեան պատճառով, անկարելի է դաս մեզի այս անգամ ֆրանքիաքի վեճին ու այդ ատրիս ֆրանսական խորհրդարանին մէջ տեղի ունեցած հայասեր հարցապնդումներու մասին մանրամասն տեղեկութիւններ տալ:

«Նոր կեանք»ի յաշորդ բռնով պիտի խօսիք այդ բոլորին մասին, որ քեզ սկսած ըլլայ իր այժմեաքիսը կորսնցնելու, սահայն և այնպէս չի գաղտնի հայ ժողովուրդին համար կարևոր ու թելադրիչ դասեր պարտանակելի:

ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժնեկին զրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUJANK"  
27, BATHURST GARDENS,  
KENSAL RISE,  
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 1 ձին: Բաժնեկինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ամիցամսեայ 1 տոլար: